№ 166 ԿԻՐԱԿԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25 1907 ԿԻՐԱԿԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25 № 166

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Այրի Մարիամ Փրիդօնեանցը իր որդիներով յայտնում է ի գիտութիւն ծանօթների և բարեկամների, որ հանգուցեալ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՓՐԻԴՕՆԵԱՆ ՓՐԻԴՕՆԵԱՆՑԻ

մահվան քառասօրեակին, կիրակի, նոյեմբերի 25-ին, պատարագից յետոյ լինելու է հոգեհանգիստը ժամ, 12-ին, ս. Նորաշէնի եկեղեցում:

(կ.) 1—1

Մարիամ և Աւետիս Մանուէլեանցները ցաւօք սրտի յայտնում են իրանց բարեկամներին և ծանօթներին՝ առաջինը իր թանգագին քրոջ, իսկ երկրորդը քենու՝

ՍԻՐԱՆՈՅՇ ՇԱՀՎԵՐԴԵԱՆՑԻ

(Աշ. II գիմնազիայի)

վաղաժամ մահը, որը տեղի ունեցաւ նոյեմբերի 21-ին: Հոգեհանգիստը կը կատարվի նոյեմբերի 24-ին, երեկոյեան ժամը 5-ին: Յուղարկաւորութիւնը ամսիս 25-ին, կիրակի, առաւօտեան ժամը 10-ին սեփական տնից (Չուղուրէթ, Վօզօպօգիեմնի փող. № 14) դէպի Չուղուրէթի ս. Աստուածածնի եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:

(շ. կ.) 2—2

ՊԵՏԱԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆՆԵՐԸ

Կատարում են

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխների ապահովագրութիւն 25 ռուբլուց սկսած մինչև 5000 ր. մահվան դէպքում:

Կենսաթոշակների ապահովագրութիւն 6—600 ր. տարեկան՝ զառամելու դէպքում:

Օժիտի եւ թոշակների ապահովագրութիւն երեխաների համար: Բանւորների կամ ծառայողների միացեալ ապահովագրութիւն ձեռնտու պայմաններով:

Մահվան դէպքում և խառն ապահովագրութիւն կապվում է առանց բժշկական վկայականի, որով ապահովագրութեան առաջին երեք տարիների ընթացքում, ապահովագրվողի մահվան դէպքում վճարած գումարները վերադարձվում են ($5^{0}/_{0}$-ը հանվում է գործավարելու համար). չորրորդ տարում մեռնելու դէպքում՝ ապահովագրած դրամագլխի կէսը, հինգերորդ տարում՝ դրամագլխի $^{3}/_{4}$-ը, հինգ տարի անցնելուց յետոյ մեռնելու դէպքում՝ դրամագլուխը տրվում է ամբողջովին: 3000 ր. աւելի ապահովագրութեան ժամանակ յիշեալ ժամանակամիջոցները երկարում են 2 տարով:

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՏԱՐԻՖՆԵՐ

Պրեմիաների վճարումը կէս տարով, մի քառորդ տարով և փոխադրութիւն խնայողական տետրակից—կառավարական, հասարակական եւ նման հաստատութիւնների ծառայողների համար, ինչպէս եւ ամեն ամսվայ ռոճիկներից գանձապահների (կազնաչէյ) միջոցով: Մանրամասն տեղեկութիւններ կարելի է ստանալ Պետական Բանկի բաժանմունքի և գրասենեակներին կից գտնվող պետական խնայողական գանձարաններում, մաքսատներում, պետական գանձատներում և մայրաքաղաքների գանձարաններում:

Թիֆլիսում Պետական Բանկի բաժանմունքում (Ֆրէյլինսկայա փող., Սօլօլակի փող. անկիւն) և գանձարանի բաժանմունքներում՝ Նիկոլաևսկի փող. տուն № 44 եւ Օլգինսկի փող., կից զինուորական նահանգական դատարանին, տ. № 46. Պետական գանձատանը եւ մաքսատանը: առ. 1—3

II Փոխադարձ վարկի ընկերութեան անդամների

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

նշանակված է կիրակի, ներկայ նոյեմբերի 25-ին, առաւօտեան ժամը 10-ին քաղաքային դումայի դահլիճում:

Խնդրում են դահլիճը մտնելիս ներկայացնել անդամակցական անդորրագրերը:

(շ. կ.) 2—2

ԵՂԲ. ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՆԵՐԻ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Խ. և Մ. ՄԵԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՆԵՐԻ

յայտարարում է ի գիտութ. յարգելի վաճառականների, որ նրա

Մոսկվայի խանութում

վաճառվում են մեծ քանակութեամբ

ԳԱԼԱՆՏԵՐԷՅՆԻ

զանազան ապրանքներ: Գները շատ մատչելի են: Պատուէրները կատարվում են անյապաղ և ամենայն ճշտութեամբ:

Հասցէն՝ МОСКВА, Никольская улица, домъ графа Шереметьева, Торг. домъ

„Бр. Х. и М. Меликъ-Марутянцъ“

ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

(հ. կ.) առ. 15—7

Այսօր, կիրակի, նոյեմբերի 25-ին, առաւօտեան պօստային գնացքով Բաքուից Թիֆլիս կը բերվի

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆԻ

մարմինը, որ երկաթուղու կայարանից տարվելու է Վանքի մայր եկեղեցին, և ապա, պատարագից յետոյ, տեղի կունենայ թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը, իր կնոջ գամբարանի մօտ: 1—1

ԲԺԻՇԿ

Ի. Ե. ԳՕԿԻԵԼՕՎ

Ընդունում է յատուկ վեներական, միզանցքասեռական, սիֆիլիս, կաշուէ և սեռական թուլութիւն ունեցող հիւանդներին, 9—12 ժ. առաւ. և 5—$7^{1}/_{2}$ ժ. երեկ.: Ջղային թուլութեան բժշկելը էլէքտրականութեամբ և ջրաբուժութեամբ: Михайловская, № 113, Վետցելի հիւրանոցի մօտ, տելեֆօն № 242. (կ. հ. կ). առ. 2—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Սօս և Վարդիթերի» հեղինակ. Վերջին տեղեկութիւններ. Պերճ Պռօշեանի մահը. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Տաւրիկեան պալատից. Պետական Դումայի շուրջը. Պետական Դումայի վերջին նիստերը. Դատաստանական դահլիճից. Հայոց բարեգործական ընկերութեան այսօրվայ ընդհանուր ժողովի առիթով. Թուրքահայ սովեալների օգտին. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. Ռուսաստանի կեանքից.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Յիշողութիւններ Խրիմեանի մասին:

«ՍՕՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐԻ» ՀԵՂԻՆԱԿԸ

Մի քառասուն տարի սրանից առաջ, երբ խօսք էր լինում հայ վիպագիրների մասին, միայն երկու հեղինակների անուններ էին արտասանվում մեր մէջ՝ Խաչատուր Աբովեանի և Պերճ Պռօշեանի:

Այդ երկու անուններին յետոյ աւելացան Ղազարոս Աղայեանի, Րաֆֆիի, Ծերենցի անունները, որոնց հետևեցին մեր ժամանակակից երիտասարդ վիպագրողների անունները:

Պերճ Պռօշեանը, որ յայտնի դարձաւ և անջնջելի տեղ գրաւեց հայ գրականութեան պատմութեան մէջ իր առաջին «Սօս և Վարդիթեր» նշանաւոր գրուածքով, ժամանակ առ ժամանակ հանդէս էր գալիս իր նոր վէպերով և շարունակում էր գրականութեամբ զբաղվել մինչև իր կեանքի վերջին տարին: Եւ նրա յետագայ գրուածքներից մի քանիսը աչքի ընկնող գործեր էին, օրինակ «Հացի խնդիրը», բայց և այնպէս Պռօշեանի պատմական դերը հայ վիպագրութեան ասպարէզում մնաց կապված գլխաւորապէս «Սօս և Վարդիթերի» հետ:

«Սօս և Վարդիթերը» գրված է այն ներշնչման տակ, որ գործել էր երիտասարդ Պռօշեանի վրա «Վէրք Հայաստանին». բայց նա իբրև գրուածք ուրիշ բնաւորութիւն և զարգացում ունի, քան «Վէրք Հայաստանին»:

«Սօս և Վարդիթերը» չունի դիւցազներգական այնպիսի տարրեր, ինչպէս «Վէրք Հայաստանին»: Նա չէ պարփակում իր մէջ հայկական մի ընդարձակ շրջանի կենցաղավարական և քաղաքական այնպիսի շահեր, ինչպիսիները շօշափված են Աբովեանի վէպի մէջ:

Պռօշեանը վերցրել էր սահմանափակ շրջան, այն է՝ Աշտարակ գիւղը, և աշխատել էր պատկերացնել հայկական կեանքը իր աւանդական սովորութիւններով և իրական արտայայտութիւններով: «Սօս և Վարդիթերի» միջավայրը ազգագրական և կենցաղագրական ուսումնասիրութեան մի առարկայ էր, նրա հերոսները միայն յարմար առիթներ էին գիւղական վարքագրութեան համար, իսկ ըստ էութեան նրանք պտտում էին Պավլ և Վիրգինիայի նման հերոսների շուրջը:

Մեր ժամանակակից ընթերցանութեան համար «Սօս և Վարդիթերը» չունի այն յարմարութիւնները, որոնք յատուկ են սովորական վէպերին: Բայց իր ժամանակ նա գործեց մեծ տպաւորութիւն և նպաստեց վճռելու մեր նորագոյն գրականութեան բաղդը դրական իմաստով:

«Սօս և Վարդիթերը» իր նախորդ և նախօրինակ «Վէրք Հայաստանիով» սկիզբ դրեց ժողովրդական ուղղութեան մեր նոր ծնվող և ծլող գրականութեան մէջ: Եւ Պռօշեանը մնաց հաւատարիմ իրան իր ապագայ գրուածքներում, վերցնելով իր թեմաները գլխաւորապէս ժողովրդական մեծամասնութեան խաւերից:

Ժամանակը ազդեց Պռօշեանի վէպերի բովանդակութեան վրա, և նա իր հետևեալ գրուածքներում այլևս հովուերգու չէ, իդիլլիայի բանաստեղծ չէ, ինչպէս «Սօս և Վարդիթերում», այլ դնում է իր մատը ժողովրդական վէրքերի վրա և պարզում է մեր առաջ գիւղական իրականութեան սև և քայքայիչ գծերը: «Հացի խնդիր», «Ցեցեր» և ուրիշ վէպերում նա հանդէս է բերում գիւղական ցաւ ու հոգսեր, թշուառների և թշուառացնողների, կեղեքվածների և կեղեքողների մի շարք տիպեր:

Դժբաղդաբար երկու հանգամանք խանգարում էին Պռօշեանի վէպերին տարածվելու և ստանալու մեծ ժողովրդականութիւն: Առաջինը այն էր, որ Պռօշեանի լեզուն ընդհանրապէս ծանր էր, և երկրորդ, որ վէպերը պարունակում էին բազմաթիւ կողմնակի նիւթեր, որոնց պատճառով ձգձգվում էր գրուածքը, թուլացնելով վէպի կենտրոնական առանցքը:

Եւ դա շատ ցաւալի է մանաւանդ այն պատճառով, որ Պռօշեանի լեզուի մէջ պահպանվել էին միայն վերջին տարիները բուն ժողովրդական բազմաթիւ գեղեցիկ տարրեր, պատկերացնող ոճեր, ինքնատիպ ձևակերպութիւններ:

Թէև Պերճ Պռօշեանը փորձել է իր գրիչը գրական և ուրիշ ասպարէզներում, բայց նրա գլխաւոր արժանաւորութիւնը վիպագրութեան մէջ է, որի առաջին երախայրիքը, «Սօս և Վարդիթերը», ունեցաւ պատմական նշանակութիւն հայ վիպագրութեան զարգացման ասպարէզում:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Սեփական թղթակցից)

Էջմիածին, 23 նոյեմբերի

Սինոդում ստացված է Պօլսի հայոց պատրիարքի և ազգային ժողովի պատճառաբանված միջնորդութիւնը կաթողիկոսի ընտրութիւնը առաջիկայ մայիսին նշանակելու համար:

Մեզ հաղորդում են, որ Փոխարքային ներկայանալիք պատգամաւորութեան համար Նոր-Բայազէտի գաւառի կողմից պատգամաւորներ են ընտրվել Խորէն վարդապետ Մուրադբէգեան և բժ. Վ. Արծրունի:

Երևանի նահանգապետը, համաձայն Երևան քաղաքի հասարակական ինքնավարութեան որոշման, ալիւրի գները կանոնաւորելու նպատակով, միջնորդութիւն է յարուցել կովկասեան իշխանութեան առաջ, որ, փոխադարձաբար, տեղական դումայական մատակարարական մասնաժողովի տրամադրութեան տակ դրվի 30,000 ռուբլի ալիւր Երևանի մատակարարական խանութից:

Գանձակ.—Ժամհարեանի տանը մի ռումբ պայթեց: Վիրաւորված է տանտէրը, որին և ձերբակալեցին: Տան մէջ գտնվեց զէնքեր պատրաստելու արհեստանոց: Մի քանի հոգի ձերբակալված են:

Բաթում.—Ծովային սոսկալի մրրկի պատճառով նաւերը, նոյնիսկ այսպէս կոչված «наливный», չեն կարողանում բեռնաւորվել: Կան փչացածներ:

Մոսկվա.—Այսօր, նոյեմբերի 22-ին, առաւօտեան ժամը 11 և 30 րոպէին, Գօսպիտալնի և Խուդիլօվսկի փողոցների անկիւնում, Լեֆորտօվօում, մի անյայտ կին ռումբ նետեց գեներալ-նահանգապետ Գէրշէլմանի վրա, որ իր ադիւտանտ իշխան Օբոլենսկու հետ կառքով գնում էր ներկայ լինելու հիւանդանոցի երկու-հարիւրամեակի հանդէսին: Պայթումի ուժից Օբոլենսկին մի կողմ նետվեց կառքի միջից, իսկ Գէրշէլմանը կառքից դուրս եկաւ ինքն իրան: Պոկվեց միայն նրա գլխարկի կօկարդը: Կառքը մէջտեղից կիսվեց, նրա առաջին մասն ամբողջովին ջարդ ու փշուր եղաւ: Կառապանը թեթև քերծուածքներ ստացաւ գլխի վրա, քթին, ձեռքերին և ծնկներին. ձիերի փորոտիքը թափվեցին:

Դէպքի տեղը շտապեցին անկիւնում կանգնած պրիստաւը և քաղաքապահը: Ռմբաձիգ կինը ընկած էր գետնին՝ աջ աչքը փչացած, ոտքից վիրաւորված և գանգի վրա երկու ճեղքեր ստացած: Բասմանի հիւանդանոցում վէրքերը փաթաթելուց յետոյ նրան տարան ոստիկանատուն: Գէրշէլմանը և Օբոլենսկին, վարձելով կառք, գնացին հիւանդանոց հանդէսին ներկայ լինելու:

Դէպքի տեղում մօտակայ չորս տների պատուհանների ապակիները փշրված են փողոցի երկու կողմերից: Պայթումի ուժից Գօսպիտալնի միջանցքի վերջում ջարդվել են գործարանի պատուհանները: Կառապանը ուղարկված է զինուորական հիւանդանոց: Ամբողջ օրվայ ընթացքում Գէրշէլմանի բնակարանը ներս ու դուրս էին անում մարդիկ և շնորհաւորում էին նրան ազատվելու համար: Ի միջի այլոց հեռագիր ստացվեց նաև մինիստրների խորհրդի նախագահից: («К.»)

Կ. Պօլիս.—Հիւպատոսների տեղեկութիւնների համաձայն, 39 օրվայ ընթացքում Սալօնիկի վիլայէթում տեղի է ունեցել բօլգարական հրոսակախմբերի 21 յարձակումներ, որով սպանվել է 28 հոգի, վիրաւորվել է 7 հոգի, իսկ 5 հոգու գերի են տարել:

Ուսկիւբ.—Զանազան շրջաններում բօլգարական հրոսակախմբերի գործունէութիւնը ընդարձակ չափեր է ընդունում:

Ադրիանուպոլիս. — Վիլայէթում բազմաթիւ աւազակախմբեր են երևան եկել: Կըրկ-Քիլիսէի շրջանում երևցած աւազակախումբը ոչնչացված է:

Կ. Պօլիս.—Մինչև նոյեմբերի 18-ը Սինօպի հիւանդանոցում և «Мерея» ռուսաց նաւում կային 54 խօլերայով հիւանդներ, որոնցից 36-ը մեռան:

Թէհրան.—Նոյեմբերի 18-ին մէջլիսի պատգամաւորութիւնը ներկայացրեց մէջլիսի գրաւոր պատասխանը շահի հրովարտակին: Այդ պատասխանի մէջ ասված է, որ մէջլիսը բնաւ չէ շեղվում իրան տրված օրէնսդրական և վերահսկողութեան ֆունկցիաներից և չէ ձեռնամխում գործադիր իշխանութեան շրջանում. վերջինս ամբողջովին յանձնված է կառավարութեանը, և նրա սահմաններից նա չը պէտք է դուրս գայ: Անջումանները, իբրև հասարակութիւն, օրէնքով ազատ են, քանի չեն հակասում կրօնի հիմունքներին, սահմանադրութեան կամ հասարակական հանգստութեան: Մշակվում է մի կանօնադրութիւն, ուր ամեն բան պարզված կը լինի մանրամասն կերպով:

Մէջլիսի ընդունելուց յետոյ՝ նա կը ներկայացնի շահի հաստատութեան և, անկասկած, կը վերաբերի վնասակար անջումաններին:

Թաւրիզ.—Քաղաքի դրութիւնը վերին աստիճանի սոսկալի է: Ազգաբնակութիւնը երկու մասի է բաժանվել. մի մասը յարել է Շարիաթի կողմնակիցներին, իսկ միւս մասը՝ յեղափոխականներին: Յեղափոխականները թռուցիկներ են տարածել քաղաքում, որով սպառնում են սահմանադրութեան հակառակորդներին մահացնել: Խանութները փակ են. գեներալ-նահանգապետը անզօր է կարգ ու կանոնը վերականգնել:

Թաւրիզ.—Թիւրքերը, իրանց գրաւած գիւղերում վառելիքի կարիք ունենալով, այրում են տների փայտէ մասերը: Չը նայած Թաւրիզի գեներալ-նահանգապետի հրամաններին և քաղաքացիների պատգամաւորութեան յորդորանքներին, Ուրմիայի նահանգապետը չէ ցանկանում Ուրմիա վերադառնալ:

Ուրմիա.—Սօուջբուլաղից հաղորդում են, որ թիւրքերի յայտնի կողմնակից Բայազէթ-աղան առաջարկել է Մինքբի շրջանի ազգաբնակութեան կանչել թիւրքերին, և աշխատել է ներս մտնել մի կերպ Մինքբի, բայց շրջանի սահմանագլխում փառաւոր պարտութիւն կրելով տեղական կալուածատէրերի զօրախմբից՝ յետ է նահանջել: («Կ.»)

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆԻ ՄԱՀԸ

Այսօր, կիրակի, հողին ենք յանձնում Պերճ Պռօշեանի մարմինը:

Հայ հասարակութիւնը դեռ 1899 թ. մայիսի 16-ին կատարեց Թիֆլիսում նրա գրական-հասարակական-մանկավարժական գործունէութեան քառասնամեակը:

Դեռ այդ ժամանակ «Մշակը» մատնանիշ արեց, որ Պռօշեանի «Սօս և Վարդիթեր» անդրանիկ երկասիրութիւնը, որ լոյս տեսաւ 1860 թ., մի այնպիսի ժամանակ՝ երբ դեռ ամենաջերմ բանակռիւ էր մղվում աշխարհաբարի իրաւունքների և գրաբարի յաւակնութիւնների մասին, առաջին նշանակութիւն ունեցաւ, Աբովեանի «Վէրք Հայաստանի» աշխատութեան նման, աշխարհաբարի յաղթանակը ապահովելու գործի համար:

Ահա ինչ էինք ասում մենք այդ ժամանակ.

«Սօս և Վարդիթերի» հեղինակը միւս կողմից, տալով գիւղական ժողովրդի նիստ ու կացի, շինական հասկացողութիւնների մի ընդարձակ պատկեր, միտում էր իր տաղանդաւոր նախորդի սկսած գործին, այն է՝ հանել գրականութիւնը կեղծ կլասիքական և արհեստական թեմաների շրջանից և դնել նրան րէալական ժողովրդի, ապրող մասսայի կեանքի շրջանի մէջ: «Սօս և Վարդիթերը» մօտեցել էր կեանքին իդիլլիական տեսակէտից. նա պարունակում է իր մէջ պօէմայի տարրեր, բայց դա սկիզբն էր: Աւելի ուշ՝ Պռօշեան, հաւատարիմ մնալով գիւղին, իր «Հացի խնդիր» և ուրիշ գրուածների մէջ մօտեցաւ կեանքին և ուրիշ տեսակէտից և տուեց գիւղական ցաւերի ու զրկանքների և հասարակական զեղծումների տխուր նկարագիրները»:

Կենսագրական տեղեկութիւններ

Պերճ Ստեփաննոսեան Պռօշեանցը ծնվել է Աշտարակ գիւղում 1837 թ. յունիսի 3-ին:

Նա սկզբնական կրթութիւն ստացել է իրանց գիւղում և Մուղնու սուրբ Գէորգի վանքում:

1851 թւին Ներսէս Ե. կաթողիկոսը նրան որդեգրելով՝ բերել է Թիֆլիս իր հիմնած Ներսիսեան դպրոցը:

1855 թւի մայիսին՝ Պերճ Պռօշեանցն աւարտելով Ներսիսեան դպրոցը՝ նոյն տարւայ սեպտեմբերին ոտք է դրել ուսուցչութեան ասպարէզը՝ իր հայրենի Աշտարակ գիւղում: Միաժամանակ նա կատարել է ձրիաբար տեղական գործակալութեան քարտուղարի պաշտօնը:

1858 թւին տեղափոխվելով Թիֆլիս՝ երկու տարի մայրենի լեզուի ուսուցիչ և վերակացու է եղել հանգուցեալ Նիկողայոս Տէր-Յակոբեանցի նորաբաց մասնաւոր դպրոցում, որ վերջերքը վերածվեց մասնաւոր գիմնազիայի:

1859 թւի ապրիլի 18-ին՝ լոյս տեսաւ «Մեղու Հայաստանի» լրագրում Պռօշեանցի բաւական երկար չափածոյ բանաստեղծութիւնը «Առ անձկալին Շուշան դուստր Վարդանայ» վերագրով:

Այս բանաստեղծութիւնն է Պերճ Պռօշեանցի անդրանիկ գրական փաստակը:

1860 թւի սկզբից՝ «Կռունկ» ամսագրի լոյս տեսնելու առաջին օրից մինչև 1863 թւի սկիզբը՝ Պռօշեանցն աշխատակցում էր «Կռունկին» և վարում էր խմբագրի օգնականի և սրբագրչի պաշտօնը:

«Կռունկի» առաջին համարից սկսվեց տպվել Պռօշեանցի «Սօս և Վարդիթեր» անդրանիկ վէպը:

Այդ տարիներումն էր որ Պռօշեանցը հիմնեց Թիֆլիսի, որով և ամբողջ Կովկասի հայոց աղջկանց կանոնաւոր անդրանիկ դպրոցը «Գայիանեան» անունով, ժամանակցութեամբ Սիմէօն քահանայ Ջմշկեանի և հոգաբարձութեամբ հանգուցեալ տիկին Եղիսաբէթ Յովհաննիսեանի:

Մինչև այդ ժամանակ՝ մասնաւոր տներում մի քանի տիկիններ ձեռագործի հետ ուսուցանում էին վրացերէն, գուցէ և հայերէն ընթերցանութիւն 1):

Նոյն վաթսունական տարիների սկիզբներումն էր, որ Պռօշեանցի նախաձեռնութեամբ սկիզբ դրվեց Թիֆլիսում քաղաքային թատրոնի բեմի վրա հայ ներկայացումներին 2):

Մինչև այդ ժամանակ՝ մասնաւոր տներում և Ներսիսեան դպրոցի դահլիճում կատարվել էին մի քանի ներկայացումներ հայ լեզուով:

1863—64 ուսումնական տարեշրջանում Պռօշեանցը հայոց լեզուի և գրականութեան ուսուցիչ և տեսչի օգնական էր Շուշու թեմական հոգևոր դպրանոցում:

Այս ժամանակ՝ նա հանգուցեալ տիկին Մարիամ Հախումեանցի գործակցութեամբ՝ նախաձեռնող եղաւ Շուշու հայ աղջկանց անդրանիկ դպրոցին:

1867—68 թւերին Պռօշեանցը տեսուչ և ուսուցիչ էր Ագուլիսի տղայոց դպրոցին, որ հիմնովին բարեկարգ դպրոցի վերածեց:

Պռօշեանցը հիմնեց Ագուլիսի աղջկանց ծխական դպրոցը, բայց իբրև հեղինակ Ագուլիսի դպրոցների բազման գրքոյկի՝ նա այդ գործողութիւնը կամովին վերագրել է Ագուլիսի հասարակութեանը: 3)

Պռօշեանցի խորհրդով և հսկողութեամբ շինվեցին Ագուլիսի «Թովմայ առաքեալի» վանքի գաւթում չորս ձեռք ուսուցչական հոյակապ բնակարաններ և լրացվեց դպրոցի շէնքը:

Պռօշեանցի անմիջական մասնակցութեամբ երկու շաբաթի ընթացքում 25,000 րուբլի նուէր ժողովվեց Ագուլիսի մէջ յիշեալ երկու սեռի ուսումնարանների ապահովութեան համար:

1868 թւի ամառը՝ Պռօշեանցը մնալով իր ծննդավայր Աշտարակում՝ օգնութեամբ և մասնակցութեամբ նոյն տեղի հաշտարար դատաւոր Մարկոս Դօլուխանեանցի՝ բարեկարգեց և հոգաբարձական սիստեմի վերածեց Աշտարակի ծխական դպրոցը, որի տեսչութիւնը պատրաստակամութեամբ յանձն առաւ Մ. Դօլուխանեանցը՝ դրամական նուիրատուութիւն ևս չը խնայելով իր կողմից:

1872 թւին Պռօշեանցը հրաւիրվեց նոր սկսվելիք «Մշակ» լրագրին աշխատակից անդամ:

1876 թւին Պռօշեանցը բաց արեց Աստրախանում Թաղական ծխական երկսեռ դպրոց:

1877 թւին աշխատակից անդամ և սրբագրիչ էր «Փորձ» ամսագրին:

1879 թւից մինչև հայ դպրոցների առաջին փակումը (1885) Պռօշեանցը վարում էր Երևանի թեմի և Կարսի վիճակի թեմական տեսչութեան պաշտօնը:

Այդ ժամանակները նա բացել է բաւականին թւով գիւղական ծխական դպրոցներ:

Այդ ժամանակն էր, որ հանգուցեալ Գէորգ Դ. կաթողիկոսի հրամանով Պռօշեանցն աշխարհաբարի վերածեց սուրբ աւետարանը, որ ազգանուէր հայրապետը միտք ունէր տպելու և էժան գնով տարածելու ամբողջ ռուսահայոց մէջ: Մահն արգելեց մեծագործ կաթողիկոսին իրականացնելու իր օգտաւէտ նպատակը:

Ս. աւետարանի թարգմանութեանն ի վարձատրութիւն՝ Պռօշեանցն արժանացել է Գէորգ կաթողիկոսից աստուածաբանութեան մագիստրոսի տիտղոսի: Պռօշեանցը նուէր է ստացել վեհից նրա 35 տարի գործածած արծաթեայ ջուր խմելու գաւաթը՝ մի արծաթեայ մատուցարանի հետ:

Հայ ծխական դպրոցներից յետոյ՝ կարճ ժամանակ Պռօշեանցն ուսուցիչ է եղել Երևանի հոգևոր դպրանոցում:

1887 թւից մինչև 1898 թւի սեպտեմբերը՝ Պռօշեանցն ուսուցիչ էր Թիֆլիսի Ներսիսեան ազգային հոգևոր դպրանոցում:

1889 թւից՝ «Մուրճ» ամսագրի սկզբնաւորութեան առաջին երկու տարին՝ Պռօշեանցն եղել է նոյն ամսաթերթի խմբագրութեան աշխատակից անդամ:

Այդպիսով ահա աւելի քան կէս դար Պերճ Պռօշեանցը գործեց ինչպէս մանկավարժ, այնպէս և գրող:

Պռօշեանցն աշխատակցել է «Մեղու Հայաստանի», «Կռունկ հայոց աշխարհին», «Մշակ», «Փորձ», «Աղբիւր», «Նոր-Դար» «Երևանի Յայտարարութիւններ», «Տարազ», Արարատ», «Արձագանք», «Մուրճ», «Հանդէս Գրականական», «Արաքս», «Թատրոն» և «Լումայ» պարբերական թերթերին և հանդէսներին, որոնց էջերում բազմաթիւ են Պռօշեանցի յայտնի և կեղծանունով երկերը, պատկերները, վէպիկներն և հրապարակախօսական յօդուածները:

---

1) Այս անդրանիկ «Գայիանեան» դպրոցը չը պէտք է շփոթել Թիֆլիսի Մուղնու եկեղեցու գաւթում գտնված «Գայիանեան» աղջկանց ուսումնարանի հետ, որ բացվեց եօթանասնական թւականներին:

2) Տես Ա. Թարխանեանցի խմբագրութեամբ հրատարակված «Թատրոն» հանդէս № 1, 1893 թ.:

3) Մինչև այդ ժամանակ՝ Ագուլիսում Հայրապետ Քալանթարեանցն ունէր իր տանը մասնաւոր երկսեռ դպրոց:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՊԱԼԱՏԻՑ*)

(Սեփական թղթակցից)

Միլիւկովից յետոյ Պուրիշկևիչը արտասանում է մի «հրաշալի» ճառ. դժուար էր հաշտվել այն մտքի հետ, որ դա Պուրիշկևիչն է խօսում. նրա ճառը ընդհանուր առմամբ լօգիկայից զուրկ չէր: Նա աշխատում էր բացատրել թէ ինչու նրանք դէմ են սահմանադրական կարգերին, «որովհետև, ասում է նա, դա դէմ է մեր ժողովրդական հոգուն և բնաւորութեանը: Դուք ցանկանում էք մեր ազգային կեանքի ընթացքին նոր ուղղութիւն տալ, նոր հոսանքով տանել, իսկ մենք, ընդհակառակը, պահանջում ենք, որ հին հոսանքը աւելի խորանայ և ոչ մի ժամանակ չը փոխվի նոր ուղիների: Մենք կամաց-կամաց կը բարելաւենք այդ կեանքը, իսկ դրա համար հարկաւոր է, որ լինի ինքնակալութիւն»:

Այս երկու գլխաւոր ուղղութեան շուրջն էին պտտում ամբողջ օրը Դումայի ճառախօսութիւնները: Ամեն մի ուղղութիւն այնքան պարզ էր դրել իր թէզիսը, որ թւում էր, թէ այստեղ արդէն միջին ճանապարհ ընտրել չէր կարելի և հոկտեմբրիստները պէտք է թեքվէին կամ աջ և կամ ձախ:

Լեհական կօլօյի կողմից խօսում է Դմօվսկին. նա ասում է, որ նրանք միանգամայն համաձայն են առաջարկված ուղերձի առաջին մասի հետ, որովհետև այնտեղ Պետական Դուման շնորհակալութիւն է անում կայսրին նրա ողջոյնի համար, բայց կօլօն չէ կարող համաձայնվել ուղերձի երկրորդ մասի հետ, որը քաղաքական բնաւորութիւն է կրում: Եւ եթէ Դուման չընդունի աւելացնել ուղերձի մէջ այն կտորը, որ վերև արդէն բերված էր, նրանք կը հրաժարվեն քուէարկութիւնից:

Խասմամեդովը բաւականին աչքի ճառով բացատրում է մահմեդականների ծանր դրութիւնը, շնորհիւ այն անտանելի կարգերի, որոնք այժմս գոյութիւն ունեն Անդրկովկասում, և ասում է, որ նա նոյնպէս պահանջում է մուսուլմանական ֆրակցիայի անունից, որ Դմօվսկու առաջարկած ֆորմուլան աւելացվի ուղերձի մէջ:

Պատգամաւոր Բուլատը լիտովցիների կողմից նոյնպէս պահանջում է, որ Դմօվսկու առաջարկը ընդունվի:

Աշխատաւորականները ներկայացնում են իրանց կողմից մի բանաձև, որտեղ մատնացոյց է անվում, որ ներկայ Դումայում ժողովրդական ներկայացուցչութիւնը կատարեալ չէ, որովհետև, շնորհիւ յունիսի 3-ի օրէնքի, գիւղացիութիւնը հնարաւորութիւն չէ ստացել ուղարկել իր ներկայացուցիչներին պատշաճաւոր թւով:

Աջակողմեանները քանի գնում աւելի ու աւելի են գրգռվում, և ահա դուրս են գալիս մէկը միւսի ետևից և խօսում, խօսում անվերջ: Ի հարկէ, մեր Տիմօշկինը ետ չէ մնում, նա էլ է խօսում, բայց ծիծաղելի դրութեան մէջ է ընկնում. նա իր ճառը պատրաստել է հոկտեմբրիստների դէմ. բայց այն ժամանակ, երբ հերթը հասաւ Տիմօշկինին, հոկտեմբրիստները բոլորեքեան բացակայում էին, արդէն նրանք վճռում էին այն հարցը, թէ աջակողմեանների պահանջին զիջե՞ն թէ՞ չէ: Եւ ահա Տիմօշկինը դիմում է այսպէս. «Ձեզ եմ ասում, հոկտեմբրիստներ»... Ծիծաղ է բարձրանում դահլիճում, բայց Տիմօշկինը շարունակում է:

Բոլորեքեան սպասում են թէ վերջապէս ինչ դիրք կը բռնեն հոկտեմբրիստները, որովհետև նրանց վճռից է կախված ամեն ինչ: Խօսում է Պետրովօ-Սօլօվովօ, ձախ. հոկտեմբրիստ, և պարզում է, որ նրանք չեն կարող ընդունել աջակողմեանների առաջարկածը, և խնդրում են Դումայից, որ ընդունվի ուղերձը այնպէս, ինչպէս նրան կարդաց Պլևակօն:

Դրանից յետոյ խօսում է Պլևակօն և, յարձակվելով աջ ու ձախ, պաշտպանում է իրանց դիրքը:

Գիշերվայ ժամը 12-ն է: Աջակողմեանները Պլևակօյի ճառից յետոյ տեսան, որ իրանք կորցրին ամեն ինչ, առաջարկում են, որ իրանց բանաձևը քուէարկվի յանուանէ: Դուման ահագին մեծամասնութեամբ՝ 212 ձայնով 146 մօնարխիստների դէմ՝ մերժում է քուէարկութեան այդ ձևը: Անհրաժեշտ է ընդգծել, որ այդ 212 թւի մէջ մտան մի խումբ աջակողմեաններ, որոնց մէջ էին Կրուպէնսկին, Սինադինօ, Վ. Բօբրինսկին և այլն—չափաւոր աջակողմեանները: Այդ ժամանակ Մարկովը ամբիոնից յայտնում է, որ նրանք չեն կարող մասնակցել այլ ևս ուղերձի քուէարկութեան, և դիմօնստրատիվ կերպով թողնում են իրանց տեղերը, իջնում, կանգնում են միջանցքներում և նայում, թէ ինչպէս է անցնում քուէարկութիւնը:

Միլիւկովը ամբիոնից յայտնում է, որ կադետները ետ են վերցնում իրանց առաջարկած փոփոխութիւնները և միանում են հոկտեմբրիստների առաջարկին:

Քուէարկվում է Դմօվսկու առաջարկը—Դուման բացի ձախակողմեաններից դէմ է—մերժվում է. այն ժամանակ Դմօվսկին ամբիոնից յայտնում է, որ նրանք չեն կարող այլ ևս մասնակցել ձայնատւութեան, և լեհական կօլօն հեռանում է: Մահմեդականները նոյնպէս ցանկանում են հեռանալ, բայց կադետները նրանց պահում են:

Քուէարկվում է աշխատաւորականների առաջարկը, որ նոյնպէս մերժվում է. ի հարկէ ձախակողմեանները համաձայն են աշխատաւորականների առաջարկութեան: Պատգամաւոր Բուլատը յայտնում է, որ նրանք անկարող են քուէարկել ուղերձը առանց այդ փոփոխութեան, և նոյնպէս հեռանում են դահլիճից:

Ստացվում է այսպիսի պատկեր, որ ձախակողմեան և աջակողմեան նստարանները դատարկ են, իսկ կենտրոնը կադետների հետ գտնվում է դահլիճում:

Ուղերձը նորից կարդացվում է: Աջակողմեանները նրա ընթերցանութեան ժամանակ պահանջում են, որ ուղերձը յոտնկայս լսեն. պատգամաւորներից ոմանք նստած են (կադետների լիդերները), իսկ միւսները կանգնել են, նոյնպէս կանգնել է և Ռօդզեանկօ: Նախագահը զանգահարում է և բացատրում է, որ ոչ թէ կայսրի նամակն է կարդացվում, այլ Դումայի ուղերձը կայսրին. ի հարկէ, բոլոր պատգամաւորները նստած լսում են ուղերձը և ընդունում:

Կրուպէնսկին առաջարկում է «ուռա» կանչել. Դուման ընդունում է միաձայն: Աջակողմեանները ինքնակալութեան մասին «ուռա» են կանչում: Հոկտեմբրիստները սկսում են հիմնը երգել: Դրանով էլ վերջանում է ժամը 12 և կէսին նիստը:

Արսէն Քալանթար

---

*) Տես «Մշակ» № 165.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

◆ Արդարադատութեան մինիստրը ներկայացրել է Պետական Դումային մի նախագիծ աշխատանքի տներ հիմնելու մա-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՐԻՄԵԱՆԻ ՄԱՍԻՆ

VIII

Խրիմեան Հայրիկի խուցը միմեանց մէջ մտնող սենեակներից էր բաղկացած: Առաջին սենեակում, որ կարող էր նախասենեակի տեղ ծառայել, ապրում էին նրա «փոքրաւորը»—մի բարձրահասակ ու նիհար կազմուածքով երիտասարդ սարկաւագ—և այն վանեցի սպասաւորը, որի մասին ինձ ասել էին Ալէքսանդրիայում: Ներս մտածս միջոցին այնտեղ միայն սարկաւագն էր:

— Հայրիկը այստե՞ղ է,—հարցրի նրան և, առանց ներս մտնելու համար թոյլտւութիւն խնդրելու կամ հրաւէրի սպասելու, ուղղակի մտայ ներքի սենեակը:

Խրիմեանը իր սովորական ձևով նստած էր երկար թախտի մի ծայրում դրված փոքրիկ մինդարի վրա, առջևում նոյն հաստ մուշտակների խուրձն ու թութունամանը, ծխում էր և իր առջևում կանգնած մի ինչ-որ պարոնի հետ խօսում էր:

— Բարև, Հայրիկ,—ասացի ներս մտնելուս պէս և ձեռքը բռնեցի:

— Ծօ, գ՜ենէ (դարձեալ) բուսար,—պատասխանեց նա զարմացական վրաս նայելով:

— Զարմանալու ոչինչ չը կայ, Հայրիկ, ուխտ եմ եկել:

— Հա, գիտեմ, դու ուխտաւորներէն կըսիրես,—պատասխանեց նա խորհրդաւոր շեշտով և շտապեց իր մօտ կանգնած պարոնին ճանապարհ դնել:

— Այդ պարոնի հեռանալուն պէս ես շտապեցի Հայրիկին զգուշացնել, որ նա ինձ իմ իսկական անունով չը կոչի, այլ որ իմ անունը այժմ Նշան Կարապետեան է, թաւրիզեցի:

— Նորէ՞ն մկրտվեր ես. աղէկ. հասկցայ: Բայց այստեղ քեզի համար ինչ գործ կայ:

— Ես ուղարկված եմ յատկապէս ձեզ Եւրոպա տանելու:

— Հիմա ալ Խայրի՞կը պիտի փախցնես, խա-խա-խա,—ասաց նա ու ծիծաղեց, և ապա, իսկոյն խօսքը փոխելով,—աչքդ լոյս,—աւելացրեց նա,—Մակարնիդ մեռաւ:

Ճանապարհորդութեան մէջ գտնվելով, ես բաւական ժամանակ հայ լրագիրներ չէի կարդացել ու մինչ այդ ժամանակ չէի էլ իմացել Մակար կաթողիկոսի մահը: Հէնց այդ մասին էր ինձ գուժում Խրիմեանը:

— Մեռե՞լ է Մակարը մեռել է. այդ ե՞րբ,—հարցրի ես Հայրիկից և այդ հարցումներիս պատասխանը ստանալուց յետոյ աւելացրի.—էլ ինչո՞ւ իմ աչքը լոյս, Հայրիկ, շատ աւելի ձեր աչքը լոյս, որովհետև այժմ ձեզ կընտրեն նրա տեղը:

— Չէ, գիս չեն ընտրեր,—ասաց Խրիմեանը մի տեսակ կասկածական շեշտով:

— Ինչ է, ախորժակ ունէ՞ք, Հայրիկ: Իսկ ես, ընդհակառակը, հաւատացած եմ, որ եթէ դուք ցանկութիւն ունենաք կաթողիկոս դառնալու, ընտրվելու ամենահաւանական թեկնածուն դուք էք. Արծրունին և բոլոր մշակականները, անշուշտ, ձեր թեկնածութիւնը կը պաշտպանեն. չէ՞ որ Մակարից առաջ եղած ընտրութիւնների ժամանակ էլ դուք մշակականների երկրորդ թեկնածուն էիք, և եթէ այն ժամանակ «Մշակը» փակված չը լինէր, հաւանական էր, որ հէնց Մակարի փոխարէն դուք ընտրվէիք:

—Ճիշտ կըսես,—ասաց Խրիմեանը,—բայց եթէ ես ընտրվիմ ալ, ձեր կառավարութիւնը գիս չի հաստատեր:

— Այդ կողմից արդէն դժուար է երաշխաւորել, ի հարկէ: Բայց մի՞թէ, Հայրիկ, դուք կը ցանկանայիք կաթողիկոս դառնալ այսպիսի մի ժամանակ, երբ կաթողիկոսական բոլոր իրաւունքները խլված են և կաթողիկոսին այլ ևս համարեա թէ ոչինչ չէ մնում անելու, բացի միմիայն լոկ կրօնական ու եկեղեցական գործերով զբաղվելը:

— Չէ, ես անանկ բան մըն էր՝ ըսի—պատասխանեց նա, բոլորովին անտարբեր վերաբերմունք ցոյց տալով դէպի այն հարցը, որի մասին խօսում էինք:—Երևի, դուն չես գիտեր,—աւելացրեց Խրիմեանը փոքրիկ լռութիւնից յետոյ,—թէ ինչով կը ղեկավարվի կառավարութիւնը ընտրված կաթողիկոսական թեկնածուներուն մէջէն ընտրութիւն անելու ժամանակ: Կաթողիկոսին մեռնելէն ետև առաջ Պետերբուրգէն թուղթ կը ղրկվի ռուսաց Պօլսոյ դեսպանին: Անշուշտ ատանկ թուղթ մըն ալ Կովկասի փոխարքայութեան կը ղրկվի: Այդ թուղթին մէջ երկար շարք մը հարցումներ կան տրված, որոնց դիմացը Պօլսոյ դեսպանը պէտք է պատասխաններ գրէ ու թերթը Պետերբուրգ ուղարկէ այն ժամանակ, երբ հայերը կաթողիկոսական ընտրութիւնը կատարած վերջացուցած են և ընտրված թեկնածուները արդէն յայտնի են: Այդ թղթին մէջ տրված հարցումները սա են, թէ ինչ աչքի զարնող եպիսկոպոսներ կան, որոնք կրնան հաւանականօրէն կաթողիկոսական թեկնածուներ համարվիլ: Եւ ապա մանրամասն հարցապնդում կընէ այդ թուղթը իւրաքանչիւր եպիսկոպոսի մասին այն մտքով, թէ ինչ տեսակ մարդ է նա, փառասէր է արդեօք, թէ՞ ոչ. կամքի տէր է, թէ՞ ոչ. ազատամի՞տ է, թէ՞ պահպանողական, և այլն և այլն: Ահա, դեսպանատան տուած այդ տեղեկութիւններո՛վ է,—աւելացրեց Խրիմեանը՝ ինձ համար բոլորովին նորութիւն կազմող՝ այդ տեղեկութիւնները հաղորդելուց յետոյ,—որ կառավարութիւնը կը ղեկավարվի կաթողիկոսական այս կամ այն թեկնածուն հաստատելու ժամանակ:

Մինչ այդ ժամանակ, որ ես խիստ սկսել էի կասկածել, թէ մի՞ գուցէ ես ինքս արջի ծառայութիւն մատուցեցի այն միսիային, որի համար եկել էի, մտածելով, թէ մի՞ գուցէ հաւատացնելով Խրիմեանին, որ Արծրունին ու մշակականները նրա թեկնածութիւնը կը պաշտպանեն կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ, ես այդպիսով նրա մէջ կաթողիկոս դառնալու յոյսեր ներշնչեցի, ուստի և նա այժմ, կաթողիկոսական գահը գերադասելով, այլևս չի ցանկանայ Եւրոպա փախչել,—կրկնում եմ, մինչ այդ ժամանակ, որ ես սկսել էի այդ մասին սաստիկ կասկածել, Խրիմեանի արած այդ պատմութիւնը լսելուց յետոյ ես բոլորովին միամտվեցի ու հանգստացայ: «Պօլսի դեսպանը,—մտածում էի ինքս ինձ,—անշուշտ, այնպիսի տեղեկութիւններ կը տայ Հայրիկի մասին, որ ռուսաց կառավարութիւնը նրան երբեք չի հաստատի: Այդ բանը ինքը՝ Հայրիկն էլ շատ լաւ է հասկանում, ուրեմն էլ ինչ յոյսեր նա կարող է ունենալ: Եւ մի՞թէ Հայրիկը այսպիսի մի ժամանակ, երբ մենք Հայաստանի ազատութեան նախօրեակումն ենք գտնվում և երբ այդ բաղձալի օրը փութացնելու համար Հայրիկը Եւրոպայում հազարապատիկ շատ աւելի մեծ գործ կարող է կատարել, քան թէ Էջմիածնի կաթողիկոսական վանդակի մէջ նստած, մի՞թէ այսպիսի մի ժամանակ, ասում եմ, Հայրիկը կը գերադասէ աւելի կաթողիկոս դառնալ, քան թէ Եւրոպա գնալ և մեզ հետ Հայաստանի ազատութեան ու հայ ժողովրդի վերածնութեան համար աշխատել: Չէ, Հայրիկը այդպիսի բան չի անի, եթէ նոյնիսկ ոչ մի կասկած չունենայ իր ընտրութեան ու հաստատման մասին»:

Այս ու այսպիսի մտածմունքների մէջ էի ընկղմված, երբ Խրիմեանը մի-երկու րոպէով դուրս գնաց սենեակից և ապա, վերադառնալով, պատուիրեց փոքրաւորին մեզ համար սուրճ բերել:

— Դու պօլսեցի Եսայեանները կը ճանչնա՞ս,—հարցրեց ինձ յանկարծ Խրիմեանը:

— Ուսանողութեանս ժամանակ Ժընևում մի ուսանող Եսայեան կար, նրան ճանաչում էի: Բայց ինչո՞ւ էք հարցնում:

— Ոչինչ. այդ Եսայեանները հոս են. հիմա պիտի գան ինծի մօտ բարովի. այսօր կը մեկնին: Կուզէ՞ս որ անոնք զքեզ հոս տեսնեն. Դեվկանցն *) ալ հոս է. ադ մարդը եկեր էր և կուզէր վարդապետ ձեռնադրվիլ, այն պայմանաւ միայն, որ հոս չապրի. բայց պատրիարքը պայման դրաւ, որ գոնէ 5 տարի հոս ապրի. ան ալ չընդունեց և հրաժարեցաւ ձեռնադրվելէ:

—Դեվկանցին ճանաչում եմ,—ասացի,— և չէի ուզենայ, որ նա ինձ Երուսաղէմում տեսնի. նա կարող է բան կասկածել:

— Իշտէ ատոր համար հարցուցի. թէ որ չես ուզեր հանդիպիլ, խահվէդ խմէ ու գնա: Երբ անոնք երթան, ես մարդ կը ղըրկեմ ու քեզի կը կանչեմ. հիմա սամավար ալ ունիմ, գնել կուտամ ու մէկ տեղ չայ կը խմենք:

— Իսկ կարելի՞ է միթէ ձեզ մօտ յաճախ գալ, Հայրիկ:

---

*) «Ճանճէն ի Սիբիր» գրուածքի հեղինակը:

մին, նոյնպէս և քրէական նոր օրէնսդրութեան 32-րդ և 274-րդ յօդուածների որոշումները գործադրելու համար: Այդ նախագծի համաձայն, աշխատանքի տները, ինչպէս «Н. В.» լրագիրն է հաղորդում, հիմնւում են թափառաշրջիկութեան կամ մուրացկանութեան մէջ մեղադրւողներին դատարանի որոշմամբ տեղաւորելու համար, նպատակ ունենալով այդպիսով բարձրացնել նրանց բարոյական մակերևոյթը և նախապատրաստել ազատ կեանքի մէջ սեփական աշխատանքով ապրելու:

◆ Պետական Դումային առաջարկվում է մի օրինագիծ Կուբանի և Տերեքի շրջանի լեռնական հրէաներին թոյլատրելու ձեռք բերել անշարժ կայքեր այն տեղերում, որի վրա նրանք գրված են:

◆ Սօց.-դեմօկրատների կուսակցութեան վերջին կոնֆերենցիան հնարաւոր գտաւ մասամբ զիջել փոքրամասնականներին և թոյլատրել Դումայի ֆրակցիային բացառիկ դէպքերում, առանձին կարևոր օրինագծերի վերաբերմամբ, քուէարկութեան ժամանակ ձայն տալ օպպօզիցիայի հետ միասին, այլ ոչ թէ խուսափել քուէարկութիւնից:

◆ Դումայի քարտուղարի աւագ օգնական Զամիսլովսկին, իր ընտրութիւնից անմիջապէս յետոյ, թերթերին ուղղած նամակով յայտնում է, որ ինքը թէև աջակողմեան է, բայց և այնպէս ընդունում է Դումայի օրէնսդրական իրաւունքները:

◆ Ինչպէս յայտնի է, Դումայի նիստերից մէկում Պուրիշկևիչը ասել էր, որ ժողովուրդը արքայասպաններ էր ուղարկել: Այդ առիթով երբ պատգամաւոր Ռոդիչևը սկսեց խօսել, Պուրիշկևիչը պատասխանեց, որ դա սուտ է, ինքը այդպիսի բան չէ ասել: Ի նկատի առնելով այդ առիթով յարուցված կասկածը, պատգամաւորներից մի քանիսը ստուգութիւններ կատարելով գտել են, որ Դումայի ստենոգրամմի ըսկըզբնական բնագրի մէջ բառ առ բառ ասված է. «ժողովուրդը ուղարկեց սպանողներին»:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՆԻՍՏԵՐԸ

Ռօգանօվից եւ Դմօվից յետոյ Մինիստրների Խորհրդի նախագահը արտասանում է հետևեալ ճառը. (կառավարական դեկլարացիայի շարունակութիւնը).

«Պետական Դումայի պարոնայք անդամներ: Լսելով կառավարութեան դէմ այստեղ արած նկատողութիւնները և մեղադրանքները, ես ինձ հարց տուի,—կարո՞ղ եմ արդեօք ես, կառավարութեան գլուխս, ընթանալ բերանացի վէճի և միայն բերանացի բանակռուի ճանապարհով և նորանոր ճառերի սնունդ տալ այն ժամանակ, երբ երկիրը լարված ուշադրութեամբ և տանջալից անհամբերութեամբ սպասում է մեզանից առօրեայ աշխատանք, որի ծածկված փայլը կարող է երևալ միայն ժամանակի ընթացքում. ի հարկէ վէճ սկսելով չը պէտք է հասկանալ այն երկիւղից, որ կառավարութեանը անպատասխան կը կոչեն, ինչպէս բոլորովին ի զուր տեղը անցեալ Դումայում անուանեցին նրան անպատասխանատու: Ասպարէզ եմ գալիս ես բացատրութիւններ տալու ո՛չ նրա համար, որ կրկնեմ և կրկնապատիկ պարզեմ՝ թէ ինչի մէջ է իսկապէս կառավարութիւնը ընդգծելու իր գործունէութեան ղեկավար սկզբունքները, ո՞ւր է նա արդեօք գնում և ո՞ւր է տանում երկիրը: Միայն այն կառավարութիւնը իրաւունք ունի ապրելու, որպիսին պետական ամբողջ կամք ունի: Կառավարութեան նպատակը, որ որոշակի արտայայտված է իմ կարդացված դեկլարացիայի մէջ, անկասկած մթագնված է արտասանված ճառերից: Այդ պատճառով էլ ես խօսք խնդրեցի:

Ես մի կողմ կը թողնեմ այն նկատողութիւնները, որ այստեղ արին ձախակողմեանները յունիսի 3-ի ակտի վերաբերութեամբ: Ես չեմ, ի հարկէ, որ պաշտպանելու եմ Թագաւորի իրաւունքը և վտանգի րօպէներին ազատելու Աստուծուց յանձնված Նրա պետութիւնը (աջակողմում և կենտրոնում ծափահարութիւն): Ես չեմ պատասխանի նաև այն մեղադրանքին՝ թէ մենք ապրում ենք ինչ-որ արևելեան դեսպօտամ: Ինձ թւում է, որ ես կառավարութեան անունից արդէն պարզ ասացի, որ այն կազմը, որի մէջ մենք ապրում ենք, ներկայացուցչական, Ինքնակալ Միապետի շնորհած կազմ է, և ուրեմն պարտադիր է Նրա բոլոր ամենահպատակների համար: (Աջակողմում և կենտրոնում ծափահարութիւն):

Բայց, պարոններ, ես չեմ կարող կանգ չառնել երրորդ տեսակի՝ նկատողութիւնների—այն մեղադրանքների վրա, թէ կառավարութիւնը ձգտում է Ռուսաստանում ստեղծել ինչ-որ ոստիկանական բարեկեցութիւն, որ նա ձգտում է սեղմել ամբողջ ժողովուրդը ինչ-որ կամայականութեան և բռնութեան կապանքներում: Դա սխալ է: Լեհական Թագաւորութեան ներկայացուցչի խօսքերի վերաբերութեամբ ես վերջում կը խօսեմ, իսկ այժմ մի քանի խօսք կասեմ դատարանի անփոփոխելիութեան և ծառայողների քաղաքական գործունէութեան մասին՝ առաջին հռետորի արտայայտած կարծիքների առիթով: Դատարանի անփոփոխելիութեան նկատմամբ ասածը այստեղ սպառնալիքի տեղ ընդունվեց: Ես կարծում եմ, որ այդօրինակ բնաւորութիւն դրան չէ կարելի տալ: Ինձ թւում է, որ Ռուսաստանի այժմեան ճգնաժամի դրութեամբ դատարանական ապարատը, քաղաքական բնաւորութիւն կրող կռիւը տանելու համար, երբեմն՝ վերին աստիճանի հնարաւոր ապարատ է ներկայանում: Յիշեցէք քաղաքական այն սպանութիւնները, որոնց այնպէս պերճախօս կերպով նկարագրեց այստեղ Ռօգանովը, պատկերացնելով բոլոր վկաների, նոյնիսկ 6-ամեայ աղջկայ սպանութեան պատկերը, որպէսզի դատարանը ոչ մի տարր չունենայ՝ մեղադրական դատավճիռը կազմելու համար: Հարկաւոր էլ չէ ասել, որ դատարանը իսկապէս կարող է ինքն էլ սպառնալիքների ազդեցութեան տակ գտնվել և քաղաքական քաօսի և հրդեհի ժամանակ կարող է երբեմն գործել ոչ պատուօրէն: Ոչ թէ սպառնալիքով, պարոններ, ոչ թէ սպառնալիքով եկանք մենք այստեղ, այլ բացէիբաց, երես առ երես յայտնեցինք, որ այն դէպքերում, երբ տեղերում կանգնած են ոչ այնքան հաստատակամ մարդիկ, երբ գործը հայրենիքի փրկութեանն է վերաբերում, այն ժամանակ հարկ է լինում դիմել այնպիսի միջոցների, որոնք նորմալ կեանքի ընթացքի մէջ չեն մտնում:

Ես այն ժամանակ յիշատակեցի առաջնակարգ երկիրներից մէկին: Այդ երկիրը Ֆրանսիան է, ուր դատարանների անփոփոխելիութիւնը ժամանակաւորապէս կանգնեցվեց: Դա մեզ պատմութիւնն է սովորեցնում. չէ՞ որ դա փաստ է:

Այստեղ խօսեցին ծառայողների քաղաքական գործունէութեան մասին. ասացին, որ հարկաւոր է անկուսակցականութիւն, որ չէ կարելի այդ գործունէութեան մէջ կուսակցականութիւն մտցնել: Կասեմ՝ կառավարութիւնը, ուժեղ կառավարութիւնը պէտք է տեղերում փորձառու գործադրողներ ունենայ, որոնք նրա աչքերն են հանդիսանում, և երբեք կառավարութիւններից և ոչ մէկը ոչ մի աշխատանք—ոչ միայն րեպրեսիվ, այլ և ստեղծագործող—չի կատարի, եթէ իր ձեռքերում գործադիր իշխանութեան կատարելագործված ապարատ չունենայ:

Ես անցնում եմ միւս կէտերին: Մեզ այստեղ կշտամբեցին այն բանում, որ կառավարութիւնը ներկայումս ցանկանում է իր գործունէութիւնը ուղղել բացառապէս րեպրեսիաների համար, որ նա չէ ցանկանում զբաղվել ստեղծագործող աշխատանքով, որ նա չէ ցանկանում իրաւունքի հիմնակէտում դնել այն օրինական հիմունքը, որին ծարաւի է անշուշտ ամեն մի պետութիւն ստեղծելու րօպէներին, ես առաւել Ռուսաստանը՝ ներկայիս պատմական րօպէին:

Ինձ թւում է, որ կառավարութեան միտքը այլ է: Կառավարութիւնը, յեղափոխութիւնը ճնշելու հետ միասին, ձեռնարկեց ազգաբնակութիւնը բարձրացնել այն աստիճանին, որ նա իսկապէս օգտվի շնորհված բարիքներից: Քանի որ գիւղացին աղքատ է, քանի նա չունի անձնական հողային սեփականութիւն, քանի նա բռնութեամբ գտնվում է համայնքի ցանցերում, նա բատրակ կը մնայ և ոչ մի գրված օրէնք քաղաքացիական ազատութեան բարիք չի տայ նրան (բուռն ծափահարութիւն կենտրոնում և աջակողմում): Այդ բարիքներից օգտվելու համար չէ՞ որ հարկաւոր է կարողութեան որոշ, թէկուզ շատ փոքրիկ, բաժին: Ես, պարոններ, այս րօպէիս յիշեցի մեր մեծ գրող Դոստոևսկու խօսքերը. «Փողը դրոշմած (կտրած) ազատութիւն է»: Կառավարութիւնը չէր կարող ընդ առաջ չը գնալ և բաւարարութիւն չը տալ իւրաքանչիւր մարդու՝ հետևաբար և մեր գիւղացու բնածին անձնական սեփականութեան զգացմունքին, որ նոյնչափ բնական է, ինչպէս քաղցի զգացմունքը և մարդու այլ բնական ամեն մի զգացմունք: Ահա ինչու համար ամենից և բոլորից առաջ կառավարութիւնը դիւրացնում է գիւղացիներին՝ վերափոխել իրանց տնտեսական կենցաղը և բարելաւել նրան, և ցանկանում է նպաստել գիւղերի և կառավարական ֆոնդի համար ձեռք բերած հողերի միութիւնից ստեղծել անձնական սեփականութեան աղբիւր: Մանր հողային սեփականատէրը անկասկած ապագայ մանր զեմստվոյական միութեան միջուկը կը հանդիսանայ, աշխատասէր, սեփական արժանապատուութեան զգացմունքով համակված՝ նա գիւղական կուլտուրայի մէջ լուսաւորութիւն և լիութիւն կը մտցնէ: Այն ժամանակ միայն գրված այն ազատութիւնը իսկական ազատութեան կը փոխվի, որը, ի հարկէ, կազմվում է քաղաքացիական ազատութիւնից և պետականութեան ու հայրենասիրութեան զգացմունքներից: (կենտրոնում և աջակողմում բուռն ծափահարութիւն. աղաղակներ՝ «բրաւօ, բրաւօ»):

Այդ պայմաններով աջողութիւն կունենայ տեղական դատարանի գաղափարը, աջողութիւն կունենայ և՛ այն վարչական դատարանի գաղափարը, որ անհրաժեշտ է իբրև ամեն մի աջողութեան հիմք տեղական ինքնավարութեան մէջ:

Այստեղ խօսեցին ապակենտրոնացման մասին: Լեհական Թագաւորութեան ներկայացուցիչը ասաց, որ կառավարութիւնը անհրաժեշտօրէն, առանձնապէս այս րօպէիս, պէտք է ույժ փնտռէ ոչ թէ բիւրոկրատական կենտրոնացման մէջ, այլ նրա մէջ, որպէսզի տեղական ույժերը հակվեցնի ինքնավարութեան, որպէսզի նրանք ուղղեն այն թերութիւնը, որ անխուսափելիութեամբ կերևայ միայն բիւրոկրատիայի վրա յենվող իւրաքանչիւր կենտրոնական իշխանութեան մօտ: Ամենից առաջ կասեմ, որ դրան կառավարութիւնը չի առարկել, բայց ես պէտք է յայտնեմ, որ ինքնավարութեան այն ույժը, որին յենվելու է կառավարութիւնը, պէտք է միշտ ազգային ույժ լինի. (կենտրոնը և աջակողմը ծափահարում են): Մեզ ասացին, որ 1882 թ. Լեհական Թագաւորութեան մէջ համեմատաբար աւելի շատ դպրոցներ կային, քան 1900 թ.: Դրան ես կը պատասխանեմ այսպէս. այժմ այնտեղ չը կայ նոյնիսկ բարձր կրթական հաստատութիւն, և բարձր կրթական հաստատութիւն այնտեղ չը կայ այն պատճառով, որ այն քաղաքացիները, որոնք հէնց այժմ իրանց անուանեցին երկրորդ կարգի քաղաքացիներ, բարձրագոյն դպրոցում չեն կամենում օգտվել համապետական ռուսաց լեզուով. (աջակողմում աղաղակներ «բրաւօ». բուռն ծափահարութիւններ): Միացէք ազգային ցեմենտով, և այն ժամանակ, պարոններ, մեզանից ապակենտրոնացում պահանջեցէք. (կենտրոնում և աջակողմում բուռն ծափահարութիւն): Ապակենտրոնացումը կարող է լինել միայն ույժերի առատութիւնից. հզօր Անգլիան, ի հարկէ, իր պետութեան բոլոր բաղկացուցիչ մասերին շատ լայն իրաւունքներ է տալիս, բայց դա ույժերի առատութիւնից է:

Եթէ այդ ապակենտրոնացումը մեզանից պահանջում են թուլութեան րօպէին, երբ նրան կամենում են կորզել և կորզել այն արմատներով, որոնք պէտք է կապեն ամբողջ կայսրութիւնը, այնպիսի թելերով, որոնք պէտք է ամրացնեն կենտրոնը ծայրագաւառների հետ, այն ժամանակ, ի հարկէ, կառավարութիւնը կը պատասխանէ—ոչ. (բուռն ծափահարութիւն կենտրոնում և աջակողմում): Ամենից առաջ կանգնեցէք մեր հայեցակէտի վրա, ընդունեցէք, որ ամենամեծ երջանկութիւնը ռուս քաղաքացի լինելն է, որ այդ կոչումը պէտք է կրել այնպէս հպարտ, ինչպէս երբեմն կրում էին հռոմէական քաղաքացիները. այն ժամանակ ինքներդ ձեզ կը կոչէք առաջին կարգի քաղաքացիներ և կը ստանաք բոլոր իրաւունքները (աջակողմում և կենտրոնում ծափահարութիւն): Կամենում եմ կրկին ասել, որ բոլոր բարենորոգումները, այն ամենը, ինչ որ կառավարութիւնը առաջարկեց ձեզ, յօրինված բաներ չեն: Ոչինչ բռնութեամբ, մեքենաբար չենք կամենում արմատացնել ժողովրդական գիտակցութեան մէջ. բոլորը ազգային է: Ինչպէս Ռուսաստանում մինչև Պետրոս Մեծը, այնպէս և նրանից յետոյ տեղական ույժերը միշտ կատարել են պետական ծառայակցական պարտականութիւնները: Չէ՞ որ դասերը և նրանք երբեք օրինակ չը վերցրին Արևմուտքից. կռիւ չը մղեցին կենտրոնական իշխանութեան դէմ, այլ միշտ ծառայել են նրա նպատակներին: Ուստի մեր բարենորոգումները, որպէսզի կենսական լինեն, պէտք է ույժ որոնեն այդ ռուսական ազգային սկզբունքների մէջ: Իսկ որո՞նք են այդ սկզբունքները: Զեմստվոյի զարգացում, զարգացում, ի հարկէ, ինքնավարութեան, որ պետական պարտականութիւնների մի մասը յանձնվի յիշեալ գէմստվոններին, և ստեղծել երկրի հաստատակամ մարդիկ, որոնք կապված լինէին պետական իշխանութեան հետ,—ահա տեղական ինքնավարութեան մեր իդէալը, ինչպէս մեր վերի իդէալն է—զարգացնել Կայսրից երկրին շնորհված նոր օրէնսդրական ներկայացուցչական կազմը, որ նոր ույժ և նոր փայլ պէտք է տայ Կայսրի գերագոյն իշխանութեան (աջակողմում և կենտրոնում ծափահարութիւն): Գերագոյն իշխանութիւնը հանդիսանում է ռուսական պետութեան գաղափարների պահպանող, առկայծում է իրանից նրա ույժը և ամբողջութիւնը, և եթէ Ռուսաստանը պէտք է գոյութիւն ունենայ, այն պայմանով, որ նրա բոլոր որդիները պահեն և պահպանեն այդ իշխանութիւնը, որ կռում է Ռուսաստանը և պաշտպանում է նրան կործանվելուց: Մոսկվայի Ցարերի ինքնակալութիւնը նման չէ Պետրոսի Մեծի ինքնակալութեան, ինչպէս Պետրոսի ինքնակալութիւնը նման չէ Եկատերինա II-ի և Ազատարար Կայսրի ինքնակալութեան: Ռուսական պետութիւնը աճեց և զարգացաւ իր սեփական ռուսական արմատներից, դրա հետ միասին, ի հարկէ, կերպարանափոխվեց և զարգացաւ կայսերական գերագոյն իշխանութիւնը: Չէ կարելի մեր ռուսաց արմատներին, մեր ռուսական բունին ամրացնել ինչ-որ օտարերկրեայ ծաղիկ (աջակողմը և կենտրոնը ծափահարում են): Թող փթթի մեր մայրենի, ռուսական ծաղիկը, թող բացվի և ծաղկի նա Գերագոյն իշխանութեան և նրա շնորհած նոր ներկայացուցչական կազմի փոխադարձ ազդեցութեան տակ:

Ահա, պարոններ, խորապէս մտածված կառավարական միտքը, որով ոգևորված է կառավարութիւնը: Բայց այդ միտքը իրականացնելու համար անկասկած հարկաւոր է կամք: Այդ կամքը, պարոններ, դուք ամբողջովին կը գտնէք կառավարութեան մէջ: Բայց դա բոլորը չէ: Որպէսզի կարելի լինի նոր պետական հիմք հաստատել, հարկաւոր է մի այլ կամք, հարկաւոր է ջանք էլ նոյնպէս: Այդ կամքին և ջանքին սպասում է Թագաւորը, նրանց սպասում է երկիրը: Տուէք վերջապէս ձեր ջանքերը, տուէք ձեր կամքը յօգուտ պետական շինարարութեան, մի զգուէք կառավարութեան հետ սև աշխատանք կատարելուց (աջակողմը և կենտրոնը՝ բրաւօ, բրաւօ):

Ես ներողութիւն եմ խնդրում, որ չեմ պատասխանում միւս նկատողութիւններին: Ես կարծում եմ, որ երբ ճանապարհորդը գնում է աստղերին նայելով, նա չը պէտք է խուսափի ճանապարհին հանդիպած կրակներից: Ուստի ես աշխատեցի պարզել միայն կառավարութեան գործողութիւնների և նրա մտադրութիւնների էութիւնը: Կարծում եմ, որ Դուման դարձնելով հինաւուրց կրկէս և հանդիսատեղի ամբոխի համար, որը ծարաւի է ըմբիշներ տեսնել, որոնք իրանց հերթին մրցակիցներ են որոնում՝ ապացուցանելու նրանց ոչնչութիւնը և անզօրութիւնը, կարծում եմ, ես սխալ կը գործէի: Կառավարութիւնը պէտք է խուսափի աւելորդ խօսքերից, բայց խօսքեր կան, որոնք զգացմունքներ են արտայայտում: Այդ խօսքերը պէտք է տպաւորվեն մտքերի մէջ, արտացոլվեն կառավարողների գործերում: Այդ խօսքերը—անսասան անձնուիրութիւն է ռուսաց պատմական սկզբունքներին (փոթորկալից ծափահարութիւններ աջակողմում և կենտրոնում), դա հակակշիռ է անհող սօցիալիզմին, դա ցանկութիւն, եռանդագին ցանկութիւն է՝ վերածնել, լուսաւորել և հզօրացնել հայրենիքը իբրև ներհակ այն մարդկանց, որոնք նրա կործանումն են կամենում. դա, վերջապէս, հպատակութիւն է ոչ թէ ապրելու, այլ մեռնելու Ռուսաստանը արտացոլող Ցարի համար:

Ահա, պարոններ, այն բոլորը, ինչ որ ես կամենում էի ասել, և ասացի ինչ որ մտածում էի և ինչպէս որ կարողացայ: (Մըրրկալի, անվերջ և բուռն ծափահարութիւն աջակողմում և կենտրոնում):

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՅՍՕՐՎԱՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

Այսօր քաղաքային դումայի դահլիճում (մուտքը Երևանեան հրապարակի կողմից) նշանակված է արտակարգ ընդհանուր ժողով, որի գլխաւոր զբաղմունքը լինելու է նոր կանոնադրութեան քննութիւնը: Բարեգործական ընկերութիւնը իր նախկին կանոնադրութեամբ, որը հաստատված էր 1881 թ., մեծ համակրութիւն ունէր հայ ժողովրդի կողմից, որովհետև նա իր գործունէութիւնը տարածում էր ամբողջ Կովկասում և, բացի կենտրոնը, ունէր մօտ 20 ճիւղեր զանազան քաղաքներում ու գիւղաքաղաքներում և ծառայում էր ո՛չ թէ միայն նեղ բարեգործական նպատակների, այլև կրթական ու կուլտուրական նպատակների: Այդ գեղեցիկ կանոնադրութիւնը զոհ գնաց իշխան Գոլիցինի րէժիմին: 1899 թ. ընկերութեանը առաջարկվեց նոր կանոնադրութիւն, որով ընկերութեան գործունէութեան շրջանը սահմանափակվում էր միմիայն Թիֆլիս քաղաքով. ընկերութիւնը պէտք է նիւթական օգնութեան սահմանից դուրս չը գար ու նպաստ ստացողները պէտք է լինէին միմիայն հայ լուսաւորչականներ: Այդ ժամանակից սկսած ընկերութիւնը այլևս չունէր իր առաջվայ բարոյական հեղինակութիւնը հայ հասարակութեան մէջ, հետևապէս նուազեցին սովորական խոշոր նուիրատուութիւնները:

Ընկերութեան վարչութիւնը ի նկատի առնելով այս բոլորը և այն, որ այժմ հնարաւոր է գործել աւելի լայն ծրագրով, կազմել է կանոնադրութեան նոր ծրագիր, որի մէջ կրթական և կուլտուրական խնդիրները նշանաւոր տեղ են բռնում, և այդ ծրագիրը առաջարկվում է այսօրվայ ընդհանուր ժողովին: Անկասկած ընկերութեան անդամները, առանձին նշանակութիւն տալով այսօրվայ ժողովին, կը շտապեն այդ ժողովին ներկայ լինել, որպէսզի կանոնադրութիւնը այս տարվայ ընթացքում հաստատվի և առաջիկայ տարվանից ընկերութիւնը սկսի գործել նոր կանոնադրութեան հիման վրա:

Z.

ԹՈՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք տիկին Մարիամ Ստեփանեանից մէկ րուբլի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան քարտուղար պ. Իոսէլեանին մի զեկուցագիր ներկայացրեց գիւղատնտեսական ընկերութեան խորհրդին այն մասին, որ անհրաժեշտ է պարզել անբերրիութեան հարցը և Անդրկովկասի ազգաբնակութեան համար հացի անհրաժեշտ պաշար պատրաստել: Իր զեկուցագրի մէջ պ. Իոսէլեանին ասում է, որ վերջին ժամանակներս ցորենի պուդը բարձրացաւ մինչև 1 ր. 80 կոպէկի: Ինչպէս գիւղատնտեսական ընկերութիւնը, այնպէս և կառավարական հաստատութիւնները իրանց ձեռքի տակ չունեն փաստեր՝ հացի գները բարձրանալու պատճառները պարզելու համար, որի պատճառով զեկուցանողը անհրաժեշտ է համարում, որպէս զի գիւղատնտեսական ընկերութիւնը իր վրա վերցնի Անդրկովկասի բոլոր րայօնները քննելու նախաձեռնութիւնը բերքի տեսակէտից հաշտարար միջնորդների, ազնուականների պարագլուխների աջակցութեամբ, և ապա ընդհանուր ժողով գումարի բոլոր հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչներից՝ հացի հարցը պարզելու և այնպիսի կազմակերպութիւն ստեղծելու համար, որ կարող լինի անբերրիութիւնից վնասված րայօնները ապահովել հացի պաշարով:

◆ Խրիմեան Հայրիկի անունով Գ. Լևոնեանի գեղարուեստական կուրսերում երկու ստիպենդիայով ընդունելու ժամանակամիջոցը լրացած լինելով, ութը խնդրատուներից ընդունված են համարվում Յակոբ Մինասեան և Հայկանոյշ Յարութիւնեան:

◆ Կովկասի Փոխարքան թոյլատրել է աւտօմօբիլների հաղորդակցութիւն հաստատել հետևեալ անձանց. 1) ինժեներ Ա. Բարժիլին՝ Նովօ-Սենակի և Զուգդիդի միջև, 2) ազնուական Ն. Եվլասիեվին՝ Թիֆլիս—Թելաւ, Թիֆլիս—Սղնախ, Սղնախ—Թելաւ և 3) Ախալքալաքի բնակիչ Վ. Վարդանեանին՝ Բօրժօմ—Ախալցխա—Աբասթուման, Ախալցխա—Ախալքալաք—Ալէքսանդրօպօլ, Ախալքալաք—Արդահան—Կարս և Ախալքալաք—Բակուրիանի: («Կ.»)

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան տեղեկութիւնների համաձայն, քաղաքային ինքնավարութեան բոլոր ծառայողների թիւը 949 է. Նրանցից բժիշկներ 32, ֆելդշերներ՝ 39, բժշկական ստորին ծառայողներ՝ 37, դեղագործներ՝ 6, մանկաբարձուհիներ՝ 12, ինժեներներ՝ 9, իրաւաբաններ՝ 3, երկրաչափներ՝ 4, հաշուապահներ՝ 23, կըրանչիկներ՝ 43, վարպետներ՝ 42, մանկավարժներ՝ 154, ծառայողներ՝ 115, բանուորներ 208, հրդեհաշէջներ՝ 61: Քաղաքային ինժեները ստանում է ռոճիկ 4200 րուբլի, իսկ բանուորը մինիմում 300 րուբլի: («Յ.»)

◆ Թիֆլիսի բօրսայի մակլերներ (միջնորդներ) ընտրվել են Ֆ. Բէրման, Վ. Պրեսման, Պ. Բուդդանով, Ն. Քալանթարով, Ե. Մանդէնով և Ա. Զաքարեան: («Յ.»)

հարկաւ: Ի՞նչ կը կարծէիր, թէ Հայրիկը բանտարկեալ է հօս:

Խօսք չը կայ, որ այդ հանգամանքը ինձ չափազանց ուրախացրեց և ես վերին աստիճանի ուրախ տրամադրութեան մէջ շտապեցի հեռանալ ու սպասել, մինչև որ Հայրիկը ինձ նորից կը կանչէ, երբ Եսայեանները ու Դեվկանցը հեռացած կը լինեն:

Հազիւ էի մտել խուցս, որ լուսամուտից տեսայ այդ պարոններին դէպի Հայրիկի խուցը գնալիս:

Տրամադրութիւնս հիանալի էր: Այն միտքը միայն, որ Հայրիկը Երուսաղէմում բանտարկեալի պայմանների մէջ չէ դրված, ինձ անչափ հաճոյք էր պատճառում: «Կը նշանակէ,—մտածում էի ինքս ինձ,—բոլորովին ի զուր էին իմ բոլոր ենթադրութիւնները Երուսաղէմից փախչելու դժուարութիւնների մասին»: Վանքի պարիսպներից դուրս գալու և Հայրիկի հետ անձամբ տեսնվելու բոլոր դժուարութիւնները, որ ինձ համար ամենակարևորն էին համարվում, արդէն չը կային այլևս. մնում էր միայն Հայրիկի համաձայնութիւնը ստանալ և իսկոյն հեռագրել օգնականիս, որ գայ: Ամենից աւելի ինձ մեծ ուրախութիւն էր պատճառում այն հանգամանքը, որ գալուս հէնց առաջին օրը ինձ աջողվեց Հայրիկի հետ տեսնվել, մինչդեռ առաջ ենթադրում էի, թէ ամբողջ օրեր պիտի սպասեմ ու հազար ու մի հնարագիտութիւն գործ դնեմ, մինչև որ կը կարողանամ նրա հետ տեսնվել ու, առանց մի երրորդ անձի ներկայութեան, իմ առաջարկն ու ծրագիրները նրան պարզել: Միսիայիս կէսը արդէն աջողած էի համարում, ուստի և ուրախութիւնից երեխայի նման սենեակիս մէջ թռչկոտում էի:

Աչքերս լուսամուտից չէի հեռացնում, սպասելով, թէ երբ պիտի հեռանան Խրիմեանի այցելուները: Բայց, ինչպէս երևում էր, նրանք շուտով հեռանալու մտադրութիւն չունէին, կամ, աւելի ճիշտ է ասել, ժամանակը ինձ համար չափազանց երկար էր թւում: Համբերութիւնս հատած և քաղց զգալով՝ նորից թիկն ընկայ յատակի վրա և վերցրի, իբրև շատ բաժին, երեկոյին ինձ համար բերված և դեռևս իր տեղում մնացած հացն ու պանիրը և սկսեցի ուտել: Ջրի օգնութեամբ հազիւ էի կուլ տուել չորացած հացի պատառները, երբ «օդաբաշին» դռան ետևից ձայն տուեց.

— Հաջի-աղա, Խրիմեան սրբազանը քեզ կուզէ: «Թող գայ, չայ խմենք» ըսաւ:

Աւետաբեր հրաւէրը լսելուս պէս, «այս րօպէիս գալիս եմ» ասելով, տեղիցս ցատկեցի և շտապեցի Խրիմեանի մօտ:

Այդ րօպէին ես այնպիսի տրամադրութեան ու մտախոհութեան մէջ էի, ինչպէս լինում են սովորաբար սիրահարված երիտասարդները, երբ գնում են առաջին անգամ իրանց սիրած աղջկայ ձեռքը խնդրելու: Թէև, ինչպէս ասացի, գնալով ես աւելի ու աւելի էի հաւատում, թէ Խրիմեանը չը պիտի մերժի իմ առաջարկը, բայց և այնպէս այն րօպէին, երբ ես նրա մօտ էի գնում կտրուկ ձևով նրան առաջարկս դնելու և նրանից վերջնական պատասխան ստանալու, սիրտս սաստիկ բաբախել սկսեց: Հէնց այդպէս սրտի դողով էլ ես մտայ Խրիմեանի սենեակը:

Խ.-Ազատ

(Կը շարունակվի)

քային դումայի նիստում քննվելու են հետեւեալ գործերը. վարչութեան պատասխանը ձայնաւոր Թամամշեվին՝ թէ ինչ դրութեան մէջ է քաղաքի ֆինանսական դրութիւնը առ 1907 թ. հոկտ. 1-ը, վարչութեան զեկուցումը ի պատասխան ձայնաւոր Էլիավայի հարցապնդման՝ թէ ինչ վիճակումն է քաղաքային սպանդանոցը, այժմեան քաղաքագլուխ՝ նախկին վարչութեան անդամ իշխ. Չերքեզովի տեղ նոր անդամի ընտրութեան ժամանակամիջոց նշանակելը և արհեստանոցների ծառայողների նորմալ հանգիստը որոշող պարտադիր կանոններ մշակող մասնաժողովի զեկուցումը։

◆ Այս տարվայ յունվարի 1-ից մինչև նոյեմբերի 20-ը Թիֆլիսի քաղաքային ջրանցքից քաղաքի գանձարկղը ստացել է 306,000 ր. եկամուտ։ Անցեալ տարի նոյն ժամանակամիջոցում ստացվել էր մօտ 304,000 րուբլի։ («Կ.»)

◆ 1908 թ. յունվարին լրանում են Թիֆլիսի մէշչանների ընկերութեան լիազօրների լիազօրութիւնները, և նոյն ժամանակ էլ կը նշանակվեն 80 լիազօրների ընտրութիւնները։ Ընտրութիւնները տեղի կունենան քաղաքամասերով։ («Կ.»)

◆ Հայոց բարեգ. ընկերութեան սովորական երեկոյթը լինելու է Թիֆլիսի ժողովարանում դեկտեմբերի 16-ին։ Պատրաստվում է բալ դիմակահանդէսով «Կապոյտ-Միրաժ» անունով. ծրագիրը իր մէջ պարունակում է հետաքրքրական նորութիւններ. հիւրերը պէտք է ունենան իրանց վրա մի որ և իցէ կապոյտ իր։

◆ Նոյեմբերի 29-ին Արտիստական ընկերութեան Թատրոնում յօգուտ ուսանող Ալէքսանդր Կօրինտէլի կը ներկայացվի «Ուրիէլ Ակօստա» պիէսան Եավօրսկու և Շօրշտէյնի մասնակցութեամբ։

◆ Ալէքսանդրօվի դերձականոցի բանւորները երկօրեայ գործադուլից յետոյ աշխատանքները վերսկսեցին, ստանալով իրանց բոլոր պահանջներին բաւարարութիւն։

◆ Բագւում նոյեմբերի 22-ին միօրեայ գործադուլ էր։

◆ Բագւի լրագիրները հաղորդում են, որ նոյեմբերի 19-ի առաւօտեան իր բնակարանում ինքնասպանութիւն է գործել Բագւի նօտար Պեօտր Ժդանօվը։ Պատճառը գործերի վատ ընթացքով են բացատրում։

◆ Կարսի երկաթուղագծի Շահալի կայարանում բացվել է պօստային բաժանմունք։

◆ 1907 թ. հոկտեմբերի ընթացքում Ապշերօնի թերակղզում արտահանվել է 33,806,593 պուդ նաւթ։ Ամենաշատ նաւթ խփել է 35 ֆիրմաներում։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոյեմբերի 22-ին, երեկոյեան մօտ ժամը 10-ին, Եվլեյսկի տուպիկում բնակվող Գալուստ Մելքումեանի բնակարանից, նրա բացակայութեան ժամանակ, գողացել են 114 ր. իրեղէններ և 21 րուբլի փող։

—

Նոյեմբերի 23-ին, երեկոյեան ժամը 11-ին, Մօլօկանսկի փողոցում 2 անյայտ չարագործներ յարձակվել են Նիկ. Եսայեանցի վրա և փող են պահանջել։ Եսայեանցը մերժել է. այդ ժամանակ կողոպտիչները փայտով խփել են Եսայեանցի գլխին, որից յետոյ վերջինս աղմուկ է բարձրացրել։ Օգնութեան հասնող գօրօդօվօյները 1 անգամ կրակել են չարագործների ետևից, բայց անհետևանք է անցել։ Չարագործները անյայտացել են։

—

Նոյեմբ. 22-ին Ա. Մելիք-Ազարեանի պղնձագործական գավօդի կառավարիչ ինժեներ Գուլեանը յայտնել է ոստիկանութեան, որ սիստեմատիքաբար կարմիր պղինձ է գողացված գավօդից և որ այդ գողութիւնը կատարել է գավօդի գործակատար Աստուր Ջանօէվը, որին և ոստիկանութիւնը ձերբակալում է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9^{1}/_{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—$9^{1}/_{2}$—2 ժ. ատամի հիւ.

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։

Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։

ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1^{1}/_{2}$—2 ժ. մանկաբարձութեան։

Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Հայ դերասանական ընկերակցութիւնը
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Երկուշաբթի, նոյեմբերի 26-ին,
Տիկ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆԻ բենեֆիսին
Կը ներկայացնէ
Օ. Միրբօյի յայտնի պիէսը

ԺԱՆ-ՌՈՒԼ

Դրամա 5 գործողութեամբ
Տեղերի գները բարձրացրած են
Մասնակցում է ամբողջ խումբը
Սկիզբն է 8 ժ. երեկոյեան
(շ. կ.) 2—2

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐԻ
ԽԱՆՈՒԹՈՒՄ

ՑԵՆՏՐԱԼ ՊՕՍՏԿԱՐՏ

ՖԻՐՄԱ ԳՆՈՒՆԻ

ՍՏԱՑՎԵԼ ԵՆ զանազան տեսակ ընտիր բաց նամակներ, ալբօմներ, պասպարտներ և ուրիշ նորութիւններ։ Մեծ քանակութեամբ գնողներին զիջում է անվում։ Միքայէլեան փող. № 22.

Ա. Սարգսեան
Հ. Յարութիւնեան
(շ. կ.) 2—4

Ս. ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ
ՑԻՆԿՕԳՐԱՖԻԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՈՒՄ

Հարկաւոր է մի աշխոյժ աշակերտ ամենաչքաւոր դասակարգից։

Դիմել՝ Тифлисъ, Базарная ул., № 20, Фото-цинкографія С. Согомонянца.
(շ. կ.) 2—2

Վաճառվում են Ե. ԹՈՓՉԵԱՆԻ խմբագրած

ԼՈՅՍ

1908 թ. պատկերազարդ, գունաւոր օրացոյցները

I Գրպանի օրացոյցը 308 երես, 12 պատկերներով և 15 առանձին բաժիններից բաղկացած ընդարձակ յաւելուածով. գինը 20 կոպէկ։

II Պատի օրացոյցը բացի սովորական յաւելուածից—(բոլորովին նոր բովանդակութեամբ)—ունի մի առանձին ձրի գրքոյկ—«Ժողովածու գրական և գիտական»։ Տախտակը 8 գոյնով տպած՝ գիւղացիութեան և բանւորութեան էմբլեմները հայ կնոջ հետ միասին. իսկ երեսը Գեօրգ Ջաւուշի պատկերը. գինը 40 կոպ.։

Գումարով գնողներին ձեռնտու զեղչ։

Դիմել՝ Թիֆլիս գլխաւոր պահեստը՝ «Գուտտենբերգ» գրավաճառանոցը։

(կ. չ. ու.) 4—10

ԲԱԳՈՒ
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԻՑ

Գրավաճառանոցում վաճառվում է՝

Աղօի հայ-թուրքական ընդհարումը գինն է	1 ր. 50 կ.
Արեան ձայներ	» 50 կ.
Վիրաւոր բլբուլ	» 45 կ.
Արիւնի երգերը	» 50 կ.
Սոխակ Հայաստանի	1 ր. 20 կ.
Ծաղիկ փունջ	» 35 կ.

Օրացոյցներ պատի և գրպանի՝ զանազան հրատարակութիւններ

Նոյն տեղը կարելի է ձեռք բերել նաև այլ հեղինակների ամեն տեսակի ընթերցանութեան գրքեր, դասագրքեր, նոյնը և ռուսերէն. մինչև 5 րուբլու պահանջողները ճանապարհածախս չեն վճարում. 5 րուբլուց աւել 20% րուբլուն։

Հասցէն՝ Баку, книжная торговля Бунятова. Խնդրում եմ հեղինակներին և թարգմանիչներին մէկ-մէկ օրինակ վերադիր վճարով ուղարկեն իրանց սեփական հրատարակութիւններից նմուշի համար։ Ձեռնտու պայմաններ։

(ու. կ.) 2—2

Կարա-Մուրզայի
ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

Ընդունվում են գիշերօթիկ աշակերտուհիներ. նաև ամիս ու կէս և երեք ամիս դասընթացքով։ Ընդունվում են պատուէրներ կանանց և երեխաների շորերի, իսկ դեկտեմբերի 1-ից պատրաստ կը լինեն վաճառելու համար զանազան տեսակ հագուստներ։

Բէհբութեան և Վելեամինօվսկի փ. անկիւն, № 19.
(չ. կ.) 3—4

Կիրակի, դեկտեմբերի 16-ին,
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
կայանալու է
Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան օգտին

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ
„ԿԱՊՈՅՏ ՄԻՐԱԺ"

◆ ԾՐԱԳԻՐ

Վիճակախաղ, սինեմատօգրաֆ՝ տիկ. Իվանիցկու ղեկավարութեամբ, պատվող սեղան՝ հետաքրքիր սիւրպրիզներով, ահագին կոտիլիոն։

Մանրամասնութիւնները կը լինեն աֆիշաներում։

Հետաքրքրաշարժ դիմակը հասարակութեան որոշմամբ կը ստանայ ՊՐԻԶ (ընծայ)։

Բոլոր ներկայ եղողներին խնդրում են ունենալ իրանց վրա մի որևիցէ նկատելի իր բաց-կապոյտ գոյնի (զգեստ, դօմինօ, դիմակ, բանտ, ծաղիկ, ժապաւէն, փողպատ և այլն), հակառակ դէպքում 50 կ. տուգանքի կենթարկվեն։

Երաժշտութ. եւրոպական և ասիական
Սկիզբն է ժամը 9-ին երեկոյեան

Մուտքի տոմսակների գինն է 2 ր. 10 կ.։ Տոմսակները ծախվում են Ընկերութեան գրասենեակում, Абасъ-Абадская № 7. Նոյն գրասենեակում շնորհակալութեամբ ընդունվում են նուիրատուութիւններ վիճակախաղի համար։

(Ն. 25 դ. 9 և 16) 1—3

ՀՐԱՒԷՐ

Մողնու եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը յայտնում է ծխականներին, որ առաջիկայ կիրակի, նոյեմբերի 25-ին, ժամը 12-ին նշանակված է եկեղեցում ծխականների ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ, որի քննութեան և հաստատութեան պէտք է ենթարկվեն 1) հոգաբարձութեան հաշիւը 1906—1907 թ., 2) Գայիանեան դպրոցի նախահաշիւը 1907—08 թ. 3) Դպրոցի պահպանութեան խնդիրը և 4) Դպրոցի համար նոր շէնութիւն կառուցանելու խնդիրը։

Խնդրվում է բոլոր ծխականներին ներկայ լինել։

(Ե. ու. կ.) 3—3

Իշխանութեան թոյլտուութեամբ Թիֆլիսում հիմնված է

Ատաղձագործների ՊՐՕՖԷՍԻՕՆԱԼ ԲԻՒՐՕ,

որը վերցնում է ատաղձագործական աշխատանքներ չափաւոր գներով, համեմատ աշխատավարձի, կտորով և օրով. միևնոյն ժամանակ վերջինի գները բաժանված են 4 կատեգօրիայի։ Բիւրօն երաշխաւոր է իր անդամների համար միայն այն դէպքում, եթէ պատուէրը տրված է իրան—բիւրօյին։ III քաղաքամաս, Ռուսսկայա և Վանքսկայա փող. անկիւն, տուն Ներսիսեան դպրոցի, վերին յարկ, ամեն օր ցեր. 7—3 ժամը։

(կ.) 5—8

Շուտով լոյս կը տեսնի
ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻ

„ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ԲԱՐՈՅԱՊԷՍ ԸՆԿԱԾ ԵՒ
ԱՄԵՆՔԻՑ ԱՐՀԱՄԱՐՀՈՒԱԾԻՆ,'
(կ.) 7—7

ՈՒՍՈՒՑԻՉ

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս.

տալիս է ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ հայ լեզուից, հ. պատմութիւնից և հ. գրականութիւնից։ Ցանկացողները պայմանների մասին դիմելու են՝ Միքայէլեան փող. № 82, բն. 9։ Նոյն տեղ Քամալեան Ս.-ի հրատարակած 17 գրքերը (որ արժեն 4ր. 30 կոպ.) կարելի է ստանալ 3 ր. 20 կոպէկով. օտարաքաղաքացիների համար ճանապարհածախսով 3 ր. 80 կ.։

Էդ. Ամիչիսի «Աշակերտի յիշատակարանը» երեսուն պատկերով, թարգ. գերմ. պատրաստ է տպագրութեան։ Հարկաւոր է հրատարակիչ։

Պատրաստվում է «Էմմանուէլ Կանտի կենսագրութիւնը» գերմ. աղբիւրների հիման վրա։

(հ. կ.) 3—10

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Անասնավաճառութիւնը կարգի դնելու և վաճառողների ու գնողների հաշիւները կանոնաւորելու նպատակով, Թիֆլիսի քաղաքային վարչութեան թոյլտուութեամբ, քաղաքային անասնատան մէջ, անասնատէրերի և գնող-մսավաճառների ցանկութեամբ տեղի է ունենում խոշոր և մանր անասունների վաճառք աճուրդով։ Աճուրդի համար իւրաքանչիւր գնողից վերցնվում է գոյացած գումարից 2%՝ յօգուտ քաղաքային վարչութեան և 2%՝ յօգուտ քաղաքային աճուրդ հանողների։

Այն անձինք, որոնք կը ցանկանան անասուններ գնել աճուրդով, այդ մասին թող յայտարարութիւն տան անասնատան կառավարիչ անասնաբոյժին։

Յայտարարութիւնների քանակի չափով էլ տեղի կունենան աճուրդները։

(կ. չ. շ. ե.) 3—4

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
և վաճառվում են

„ԱՐԱՔՍ"
1908 թ.

ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
հետաքրքիր և հարուստ բովանդակութեամբ։

Գները՝ պատինը արժէ 40 կ.
ծոցինը » 20 կ.

Դիմել՝ Александрополь, типографія Саноянa. Թիֆլիսում պահեստը գտնվում է «Փարոս» գրախանութում՝ Նիկ. Մատինեանի, Эрив. площадь. Գումարով գնողներին ձեռնտու պայմաններ։

(Ե. հ. կ.) 26—8

Վ.-Աղդանի (Ղազախի գաւ.) գիւղական դպրոցի համար
ՀԱՐԿԱՒՈՐ Է

ՈՒՍՈՒՑԻՉ

Թեմական դպրոցի ցենզով. ցանկացողները կարող են դիմել պ. Սամսոն Յարութիւնեանին (Тифлисъ, Грибоѣд. ул. д. № 23).

(կ. ե. հ.) 2—3

ԲԺԻՇԿ

Գ. ՄԱՂԱՔԵԱՆ

Ներքին եւ երեխայոց, առանձնապէս ստամոքսի եւ աղիքների հիւանդութիւններ։

Ընդունելութիւն ամեն օր 12—1 ժ. առաւօտեան
5—7 ժ. երեկոյեան

Միքայէլեան փողոց տ. Ճավճավաձէի № 36.
(ա.օ.) 45—100

ԲԺԻՇԿ

Ա. Մխիթարեանց

Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33։

(ա. օ.) 52—100

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Վերադարձաւ Կովկասի հանքային ջրերից և վերսկսեց ընդունելութիւնը ներքին և ջղային հիւանդների, առաւօտ. 9—12 ժ., երեկ. 5—7 ժամ։

Միքայէլեան փողոց, № 27։
(Ե. հ. շ. կ.) 30—50

ԱՌԱՋԻԿԱՅ 1908 Թ. ՍԿԶԲԻՑ
Թիֆլիսում կը հրատարակվի

Գեղարուեստ

ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
Պատկերազարդ հանդէս
(Ամսագիր)

◆ ԾՐԱԳԻՐԸ ◆

Ա. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.—Գեղեցիկ փիլիսոփայութիւնը (էստետիկա)։ Գեղարուեստների մասին առանձնապէս՝ ա) բանաստեղծութիւն, բ) երաժշտութիւն, գ) թատրօն, դ) նկարչութիւն, ե) քանդակագործութիւն, զ) ճարտարապետութիւն։

Բ. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ՊԱՏՄԱԿԱՆԸ.—ա) Գեղարուեստը հայոց մէջ, բ) հարևան ազգեր, գ) գեղարուեստը մօտիկ արևելքում, դ) գեղարուեստը արևմուտքում, ե) նշանաւոր արուեստագէտների կեանքն ու գործունէութիւնը։

Գ. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԳՐԱԿԱՆԸ.—Նորագոյն հայ գեղարուեստական գրականութիւնից ընտիր երկասիրութիւններ՝ ա) վէպեր, վիպակներ, պատմուածքներ, բ) թատրօնական գրուածքներ, գ) արձակ և տաղաչափական բանաստեղծութիւններ։

Դ. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՒ ԴՊՐՈՑՈՒՄ.—Մանկավարժական յօդուածներ։

Ե. ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ-ՔՆՆԱԿԱՆ.—ա) Գրախօսութիւն գեղարուեստական երկերի, բ) րեցենզիա կովկասեան բեմի և հայոց թատրօնի, գ) գեղարուեստական ցուցահանդէսներ։

Զ. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ.—ա) Թղթակցութիւններ հայ արուեստի վերաբերեալ, բ) գեղարուեստը ռուս մայրաքաղաքներում, գ) արտասահմանեան նամակներ, դ) գեղարուեստական քրօնիկ—նորութիւններ գեղարուեստի աշխարհից։

Է. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ա) Եկեղեցական երաժշտութիւն, բ) աշխարհիկ երաժշտութիւն, գ) ժողովրդական-ռամկական երգեր և պարեղանակներ։

Ը. ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍ.—ա) Օրիգինալ նկարներ և պատկերներ, բ) նմուշներ նշանաւոր արուեստագէտների ստեղծագործութիւններից, գ) գեղարուեստի փառքը (առանձին թերթերով), դ) իլլիւստրացիա, օրնամենտ, մանրանկար, զարդանկար։

Թ. ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ.—ա) Մեր ասելիքը, բ) պօստարկղ։

Ժ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—Բացառապէս գեղարուեստին և գրականութեան վերաբերեալ։

«Գեղարուեստի» գիրքը լինելու է մեծադիր, քառածալ (in quarto), նման եւրոպական գեղարուեստական առաջնակարգ հանդէսներին. ծաւալը՝ իւրաքանչիւր գիրքը 100 երես երկէջեան. առանձին եղող նկարները գունաւոր. կլիշէները պատրաստվում են Լայպցիգում և Պետերբուրգում. թուղթը ընտիր տեսակի, տպագրութիւնը կարելւոյն չափ խնամքով և շքեղ։

Աշխատակիցների անպայման վարձատրութիւն
Տարեկան բաժանորդագինը 10 րուբլի
Արտասահմանի բաժանորդների համար 30 ֆրանկ
Կարելի է վճարել մաս-մաս. իւրաքանչիւր գիրքը հատավաճառ 1 ր. 50 կ.

Հասցէներ՝

Յօդուածների, նամակների և այլ գրութիւնների համար՝ Գ. Լեւոնեանին, Бебутовская № 12. Բաժանորդագրութեան, յայտարարութիւնների և այլ դրամական-գրասենեակային գործերի համար՝ Գ. Գալստեանին «Գուտենբերգ» գրավաճառանոցում և Ն. Մատինեանին «Փարոս» գրախանութում։ Օտար քաղաքներից՝ Тифлисъ, Редакція „Гехарвестъ".

Խմբագիր-հրատարակիչ՝ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆ
1—5
(հ. կ.)

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՆԿԱԽ ՄԱՄՈՒԼ"

ժողովրդական, հասարակական, տնտեսական, քաղաքական եւ գրական

ՕՐԱԹԵՐԹԻ

որը լոյս է տեսնելու Թիֆլիսում դեկտեմբերի 1-ին
«Անկախ Մամուլը» ներկայ քաղաքական կուսակցութիւններից դուրս է
Ունի մեծ թերթերի բոլոր բաժինները։ Սեփական հեռագիրներ և թղթակցութիւններ։
Իւրաքանչիւր բաժին՝ ձեռնհաս անձի խմբագրութեամբ։

ԲԱԺՆԵԳԻՆԸ

ՌՈՒՍԻԱՅՈՒՄ		ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	
Դեկտ. 1-ից մինչեւ յունվար	» 75 կ.	Տարեկան	35 Ֆր.
Տարեկան	7 — »	Կես տարին	18 »
Կես տարին	4 — »	Պարսկաստան	
Երեք ամիսը	2 — »	Տարեկան	9 ր.
Ամսական	» 75 »	Կես տարին	5 ր.

Հասցէն՝ Тифлисъ, контора редакціи „Анкахъ-Мамулъ", Гановская, 3.
6—4
(չ. ու. կ.)

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Պատիւ ունի յայտնելու ընկերութեան մեծարգոյ անդամներին, որ կիրակի, նոյեմբերի 25-ին, առաւօտեան ճիշտ ժամը 11-ին քաղաքային տան դահլիճում (մուտքը Երևանեան հրապարակից) նշանակված է ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ժողովի առարկաներն են.

1. Ընկերութեան նոր կանոնադրութեան նախագծի մասին (Թիֆլիսի Հ. Բ. Ընկերութիւնը վերափոխվում է «Հայոց Կրթական-Բարեգործական Ընկերութիւն Կովկասում»).

2. Ընկ. կտակած հանգուցեալ Յով. Խուդադեանի քարվանսարայի վերաշինութեան լրացուցիչ նախահաշուի հաստատման մասին.

3) Ընկ. քարվանսարայի շինութեան և գնած նոր տան ծախսերը ծածկելու համար 4% բոնտաները ծախելու հարցի մասին.

Ծանօթ.—Նոր կանոնադրութեան հետ կարելի է ծանօթանալ ընկ. գրասենեակում առաւօտեան ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 3-ը։

3—3
(չ. շ. կ.)

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мугдусіакоповъ съ С-ми. Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.